

«ՍԱՍՆԱ ԾՈՒՆԵՐ» ԷՊՈՍԻ ՈՐՈՇ ԵՐԿՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

ՍԱՄՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

Բանալի բառեր՝ «Սասնա ծռեր», էպոս, Հաղորեջան (Աղրբեջան), Արոպապրական, Գյուրջիստան (Վրաստան), Իրան, Մ. Աբեղյան, Ս. Կանայան, բանասաց, Գորգիզ (Գորգի):

Ամփոփում

«Սասնա ծռեր» էպոսի համահավաք բնագրում 1936 թ. տեղ է գտել «Հաղորեջան» կամ «Աղրբեջան» երկրանունը, ինչը ԽՍՀՄ օրոք նույնացվել և կապակցվել է Աղրբեջանական ԽՍՀ հետ:

Քննության արդյունքում պարզաբանվում է, որ վերոհիշյալը հիմնված է ընդամենը երկու պատումի վրա, որոնք XIX դ. վերջին գրառվել են պանդխտության մեկնած մոկացի բանասացներից: Այդ կերպ բանասացները նկատի են ունեցել պատմական Ատրպատականը, այն է՝ իրանական Աղրբեջանը: Ընդ որում, պատումներից մեկում երկրանունն անորոշ նշվում է՝ փոխարինելով Գյուրջիստանին (Վրաստան): Իսկ էպոսի առավել մեծ թվով այլ պատումների համանման դրվագներում հիշատակվում են այլ երկրանուններ, այդ թվում՝ Չինաստանն ու Հնդկաստանը, և այս դեպքում վճռորոշ դեր է ունեցել քաղաքական ենթատեքստը:

Մ. Աբեղյանը դեռևս 1908 թ. ուսումնասիրություններում որոշակիորեն բացատրություն է տվել «Հաղորեջան» երկրանվան առնչությամբ, սակայն ԽՍՀՄ օրոք, փաստորեն, տեղի է տվել «խորհրդային ժողովուրդների դարավոր բարեկամության» քարոզչական դրույթներից բխող գաղափարախոսական ճնշմանը: Ըստ այդմ՝ էպոսի համահավաք բնագիր արհեստականորեն ներածվել են միանգամայն օտար տարրեր:

Նախաբան

Դեռևս XIX դ. վերջին գրառված «Սասնա ծռեր» էպոսի որոշ պատումներում և այնուհետև 1936 թ. կազմված էպոսի համահավաք բնագրում նշվում է «Հաղորեջան» կամ «Աղրբեջան» երկրանունը:

* Ներկայացվել է 20. IV. 2026 թ., գրախոսվել է 22. IV. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Արդ, ո՞ր աշխարհագրական երկրանունն է նկատի առնվում վերոհիշյալ դեպքերում և արդյոք կա՞ որևէ տարբերակում բանասացների ու հրատարակիչների գործածած միևնույն երկրանվան առումով:

Հարցի քննության համար անհրաժեշտություն է ներկայացնում, նախևառաջ, պատմական Ատրպատականի ու ներկա Ադրբեջանի տարբերակումը, ինչը հայոց պատմագրական ավանդույթում բավարար արձանագրված է: Բացի այդ, հարցի որոշարկմանն անդրադառնալիս պետք է հաշվի առնել այն ժամանակահատվածն ու պայմանները, որոնք կարող էին նպաստել կամ խոչընդոտել ազգային էպոսի համահավաք բնագրի ձևավորմանը: Գաղափարախոսական ճնշման ներքո արիեստական տարրերի ներմուծման դիտարկումն առավել համոզիչ բնույթ է ստանում համանման այլ դրվագների առկայության բացահայտմամբ:

Ատրպատական և Ադրբեջան. երկրանվան քննություն

Հնագույն Ատրպատականը պատմական որոշակի ժամանակահատված գտնվել է Մեծ Հայքի թագավորության կազմում կամ ազդեցության գոտում՝ ունենալով վասալական կախվածություն: Անգամ հետագայում Պարթևստանի ու Հռոմի հակամարտության պայմաններում Մեծ Հայքի դիրքորոշումը կարևոր էր Ատրպատականում թագավորական իշխանության հաստատման համար:

Հին աշխարհում Ատրպատականն առավել հայտնի էր հին հունական «Ատրոպատենե» (Ατροπατηνή) անվամբ: Հունական աշխարհագրական չափանիշների համաձայն՝ երկրանվան հիմք կարող էր դառնալ որևէ անձնանուն, այլ ոչ թե ցեղանուն կամ էթնոսի անվանում: Այսպես՝ եթե Ստրաբոնի ժամանակներից (Ք. ա. 64 – Ք. հ. 24 թթ.) «Արմենիա» (Αρμενία) անվանումը կապակցվում էր արգոնավորդների արշավանքի մասնակից առասպելական թեսալացի Արմենոսին (Ἀρμενος), ապա Ատրպատականի դեպքում նկատի էր առնվում Դարեհի օրոք Մարաստանի սատրապ Ատրոպատեսը (Ατροπάτης) կամ Ատուրպատը (Āturpāt)¹, որը Ք. ա. 330 թ. անցավ Ալեքսանդր Մակեդոնացու կողմը և առժամանակ անց վերանշանակվեց միևնույն պաշտոնում: Ք. ա. 321 թ., օգտվելով ներքին գահակալական կոիվներից, Ատրոպատեսն իր տիրապետությունը հաստատեց Փոքր Մարաստանի նկատմամբ, որն սկսվեց կոչվել նրա անվամբ (Ἀτροπάτιος Μηδία): Ստրաբոնի վկայությամբ՝ Մեծն Ալեքսանդրի մահից հետո «թագավոր հռչակված Ատրոպատեսն իր որոշմամբ անկախացրեց այս երկիրը, և այժմ էլ նրա ժառանգները շարունակում են գործել և տարբեր ժամանակներում ամուսնական դաշն են կապել հայոց թագավորների, ասորիների, իսկ ավելի ուշ՝ պարթևների հետ»²:

Ստրաբոնի հաղորդման ճշմարտացիությունն են ապացուցում արձանագրված բազմաթիվ օրինակներ: Ք. ա. 56–30 թթ. Մեծ Հայքի թագավոր Արտավազդ Բ-ի ժամանակակից Ատրպատականի կամ Փոքր Մարաստանի թագավորն էր նրա հակառակորդ ու անվանակից Արտավազդ Ա-ն (Արտավազդ Մեղացի կամ

¹ Պարսկերեն՝ «կրակով պաշտպանված» կամ «կրակի պաշտպան» (Pezd. 2020, 23):

² Strabonis Geographica. 1852, 734.

Մար Արտավազդ), որին էլ Եգիպտոսի թագուհի Կլեոպատրան հետագայում ուղարկում է Ալեքսանդրիայում մահապատժի ենթարկված հայոց թագավորի գլուխը³: Սակայն նույն Արտավազդ Ա-ն հետագայում՝ Ք. ա. 30–20 թթ., թագավորում էր հայոց աշխարհի մաս կազմող Ծովքում (Փոքր Հայք), որպես հռոմեական դրածո, ինչի համար ձևական հիմք էր ծառայում նաև նրա հայկական ծագումը: Ք. ա. 30 թ. Մեծ Հայքում հոր գահին տիրանալուց հետո Արտաշես Բ-ն ոչ միայն վրեժխնդիր է լինում նրանից, այլև գրավում և հայոց երկրին է վերամիավորում Ատրպատականը: Ավելի ուշ Արտաշեսի ծագում ունեցող Մար Արտավազդի որդի Արիոբարզան Բ-ն (Ք. ա. 40 – Ք. հ. 4 թթ.) Հռոմի կողմից հռչակվում է Ատրպատականի և ապա՝ Մեծ Հայքի թագավոր: Ք. հ. 4 թ. կարճ ժամանակով երկու պետությունների թագավոր է հռչակվում մեկ այլ Արտավազդ՝ Արիոբարզանի որդին: Անշուշտ, Մեծ Հայքի և Ատրպատականի շարունակաբար միասնական պետության կազմում գտնվելը ոչ միայն միջդինաստիական կապերի, այլև հայոց ազդեցության գոտում Ատրպատականի գտնվելու արդյունք էր, ինչը պարզորոշ հետևում է հունահռոմեական պատմագրության հաղորդումներից:

Ամեն դեպքում Հին աշխարհի պատմագրության ու աշխարհագրության համար Ատրպատականն ու Աղվանքը (Կովկասյան Ալբանիա) հստակ զատորոշված էին, տարբեր էր դրանց ժողովրդագրական կազմը:

Պետք է նաև հաշվի առնել, որ Մեծ Հայքը երբեք չի հրաժարվել Ատրպատականի իր կազմում ներառելու ծրագրերից: Ըստ էության, IV դ. Ատրպատականը հայոց արքաների ձեռական իշխանության տարածք էր, սակայն ձևականորեն պատկանում էր Պարթևական թագավորությանը⁴: Սասանյանների հաստատվելուց հետո այն մնաց Մեծ Հայքի կազմում, իսկ Փավստոս Բուզանդի հաղորդմամբ՝ Շապուհ Բ-ն ճանաչում էր Արշակ Բ-ի գերիշխանությունը երկրամասի նկատմամբ («երկրորդական զմեծ տուն տայր նմա յԱտրպատական աշխարհին»)⁵:

Ավելի ուշ իրանական դարձած երկրամասը պարթևերեն կոչվում էր *Āturpātākān*, իսկ պարսկերեն (միջին պարսկերեն)՝ *Ādurbādagān*: 428 թ. Մեծ Հայքի թագավորության անկումից հետո Ատրպատականի կազմում ընդգրկվեցին հայոց Փայտակարան և Պարսկահայք նահանգները, ավելի ուշ՝ Սյունիքի որոշ տարածքներ: VI դ. երկրորդ կեսին Խոսրով Ա Անուշիրվանի բարեփոխումներից հետո մարզպանական Հայաստանն Ատրպատականի հետ ընդգրկված էր Իրանի չորս ռազմավարական միավորներից հյուսիսային կամ կովկասյան քուստակի (Քուստ-ի Կապկոհ) կազմում⁶: Արաբական արշավանքներից հետո երկրանունը որոշակիորեն հնչյունափոխվեց՝ արաբերեն դառնալով «Ադերբայջան»

³ Դիոն Կասիոսի (մոտ 155–235 թթ.) հաղորդմամբ՝ տվյալ քայլին Կլեոպատրան դիմել է Ք. ա. 31 թ. Ալեքսիոմի ծովային ճակատամարտում պարտությունից հետո՝ ցանկանալով օգնություն ստանալ դաշնակից Մեդացուց (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 1976, 189):

⁴ Հայոց պատմություն. 2018, 94:

⁵ Բ ու զ ա ն դ. 1987, 194:

⁶ Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ յաւելուածովք նախնեաց. 2003, 2157:

կամ «Ազերբայջան» (նոր պարսկերեն՝ Āzarbāydjān): VIII դ. Հայաստանն ընդգրկող Արմինիա նահանգի հետ այն կազմում էր խալիֆայության Հյուսիսային փոխարքայությունը⁷:

Բնիկների լեզուն՝ ազարի (ադարի), պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական լեզուների հյուսիսարևմտյան ենթախմբին: XIV դ. վերջին հին ազարի լեզուն կորցրեց իր նշանակությունը որպես երկրամասի գերիշխող լեզու, իսկ XV–XVI դդ. դուրս մղվեց գործածությունից⁸: Գերիշխող դարձավ թյուրքին, որը, իհարկե, բավական ընդհանրություններ ունի ներկա ադրբեջաներենի (պաշտոնական անվամբ՝ «թյուրքա») հետ, սակայն որևէ կերպ չի կարող նույնացվել: Ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել լեզվի փոխարինում էլիտ-դոմինանտության, այլ ոչ թե ժողովրդատարածման միջոցով⁹:

Ինչ վերաբերվում է Ռուսական կայսրությանը, ապա նրա կազմում նման անվամբ երկրամաս երբևէ չի եղել, իսկ Հարավային Կովկասի անգամ տեղաբնակ (ոչ տեղաբնիկ) հանրության ինքնանվանումն «ադրբեջանցի» կամ «ազարի» չէր, այլ «թյուրք» կամ «մուսուլման», ինչը որ գործածական էր հայկական շրջանակներում ևս, իսկ ռուսների և վրացիների կողմից գործածական էր «թաթարը» (ռուսների դեպքում՝ «կովկասյան թաթար»), Ղրիմի և Կազանի տեղաբնակներից տարբերելու համար): Ռուսների օրինակով եվրոպական գրականության մեջ տվյալ հանրության ներկայացուցիչները ևս նշվում էին որպես թաթարներ, իսկ որպես Ադրբեջան շարունակվում էր հասկացվել իրանական համապատասխան երկրամասը: 1915 թ. Ռուսական կայսրության Կովկասյան բանակի կազմում գործում էր Ադրբեջանական ջոկատը՝ Իրանի տվյալ երկրամասի անվամբ, զուտ զորքերի տարածքային տեղակայման սկզբունքով: Ադրբեջանական ջոկատի կազմում էին գործում հայ կամավորական խմբեր, մուսուլմանական կամ թյուրքական որևէ ստորաբաժանում դրա կազմում գոյություն չի ունեցել: Հայկական աղբյուրներում այն հիշատակվել է որպես «Ատրպատականի ռուս բանակ»¹⁰:

Առաջին անգամ որոշակի փոփոխություն արձանագրվում է Ռուսաստանում իշխանության անցած բոլշևիկյան կառավարության 1917 թ. նոյեմբերի 20-ի (դեկտեմբերի 3-ի) փաստաթղթում, այն է՝ «Ժողովրդական կոմիսարների խորհրդի դիմումը Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մուսուլմաններին»: Դրանում մուսուլման ժողովուրդների շարքում նշվում են «Անդրկովկասի թյուրքերը և թաթարները», իսկ մինչ այդ առանձին նշված են մերձվոլգյան և Ղրիմի թաթարները¹¹: Սա արդեն յուրօրինակ հայտ էր նորահաստատ իշխանությունների կողմից, որոնք, փաստորեն, փորձում էին հաշվի առնել ինչպես արդեն առկա ավանդույթը, այնպես էլ դրանից տարբեր իրողությունները:

1918 թ. մայիսին իրավիճակը կտրուկ փոխվեց Հարավային Կովկասում ստեղծված տեղաբնակ թյուրքերի ղեկավար մարմնի՝ Մուսուլմանական խորհրդի կողմից պատմական Աղվանքի (միջնադարյան Առան և Շիրվան) տարածքում

⁷ Հայոց պատմություն. 2018, 417:

⁸ Ռ ա շ ի դ վ ա շ. 2012, 54, 91:

⁹ Ռ ա շ ի դ վ ա շ. 2012, 92:

¹⁰ Հայկական ինքնապաշտպանական կոմիտե. 1915, 7:

¹¹ Обращение Совета народных комиссаров. 1937, 638–639.

«Աղբբեջանական ժողովրդական (ժողովրդավարական) հանրապետության» հռչակմամբ, որը, ըստ էության, ամբողջությամբ համաթյուրքական նախագիծ էր, թեև հիմք էր ընդունվել միանգամայն իրանական ծագմամբ երկրանուն: Մայիսի 28-ին անկախության հայտարարությունից հետո Մուսուլմանական խորհուրդը Թիֆլիսից փոխադրվեց մայրաքաղաք հռչակված Աղդամ (Ակնա), իսկ այնուհետև օսմանյան ուժերի հետ մուտք գործեց Բաքու, որտեղից սկսեց իր իշխանությունը տարածել նորահռչակ կազմավորման սահմաններում հայտարարված տարածքներում:

Իրանական կողմի համար ակնհայտ էր ծրագրի ծագման նպատակը, ըստ այդմ՝ 1918 թ. հուլիսի 12-ին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարություն էր ուղարկել բողոքի հուշագիր, որում, մասնավորապես, շեշտվում էր. «Նորաստեղծ հարևան պետությանը «Աղբբեջան» անվանելը մեծ սխալ է»¹²: 1919 թ. մարտին Փարիզի հաշտության խորհրդաժողովին Իրանը փորձեց բարձրացնել Շիրվանի և Բաքվի նահանգի վերադարձի հարցը¹³, սակայն այն նույնիսկ օրակարգի նյութ չդարձավ: Բուն Ատրպատականում շեյխ Մոհամադ Խիաբանիի գլխավորությամբ տեղի ունեցան ցույցեր, որոնք պահանջում էին նորահռչակ կազմավորումից տարբերվելու համար երկրամասը վերանվանել «Ազադիստան», այն է՝ «Ազատ երկիր», ինչի փորձն արվեց 1920 թ.¹⁴:

Բրիտանական գրավման ընթացքում կազմավորումը շարունակեց գոյություն ունենալ մինչև անվամբ: 1920 թ. ապրիլին նորահռչակ կազմավորման բավական սրընթաց խորհրդայնացումից հետո այն պահպանեց իր «Աղբբեջանական» անվանումը, քանի որ «համաշխարհային հեղափոխության» արտահանման շրջանակներում նախատեսվում էր նաև Իրանի խորհրդայնացումը կամ առնվազն տվյալ երկրամասի կցումն արդեն խորհրդայնացված կովկասյան կազմավորմանը, ինչն այդ ժամանակ չհաջողվեց¹⁵: Մասնավորապես, Գիլանի նահանգում հռչակվել էր «Գիլանի ԽՍՀ»-ն, Ռեշտ և Էնզելի էին մտցվել որոշ կարմիր զորամասեր՝ բրիտանական ուժերի և Դենիկինի զորքի մնացորդների դեմ պայքարի պատրվակով: Մինչև կազմավորումը հետագայում գործում էր որպես «Պարսկական խորհրդային հանրապետություն» և համարվում էր ապագա «Կարմիր Իրանի» հիմքը: «Պարսկական կարմիր բանակի» կազմում էր ընդգրկված նաև Բաքվից գործուղված «աղբբեջանական մուսուլմանական

¹² Р е з а. 2020, 7.

¹³ Վ ր ա ց ե ա ն. 1920, 24. 02. 1920:

¹⁴ Ռ ա շ ի դ վ ա շ. 2012, 30–31: Հակառակ նախկին ԽՍՀՄ և ներկա Աղբբեջանի պետական քարոզչությանը՝ Խիաբանիի շարժումը երբևէ հետամուտ չի եղել Աղբբեջանի անջատմանն Իրանից, այլ այն դիտարկել է որպես Իրանի անբաժանելի մաս (Վ ա ‘ ճ а н и. 2002, 247):

¹⁵ Գ. Նժդեհի վկայությամբ՝ 1920 թ. հուլիսին Սյունիք ներխուժած բուլշևիկյան ուժերը ճանապարհ էին խնդրում իրանական Զուլֆա անցնելու համար, ինչով պիտի հեշտացվեր «առաջխաղացումը դեպի հեռուները՝ Պարսկաստանի վրայով Հնդկաստան» (Ն ժ դ ե հ. 2002, 29): Նժդեհի հարցին, թե «Պարսկաստանը արդեն խորհրդայնացա՞ծ էք համարում», կարմիրների բանագնացը հաղթական տոնով պատասխանում է. «Գրեթե այո՛» (Ն ժ դ ե հ. 2002, 29):

գորամասը»: Սակայն հիմնականում Լ. Տրոցկու կողմից վարվող քաղաքականության և Ս. Օրջոնիկիձեի «պարսկական արշավանքի» ձախողումից հետո 1921 թ. սեպտեմբերին խորհրդային ուժերն ամբողջությամբ դուրս բերվեցին Իրանից¹⁶:

Նույնիսկ ԽՍՀՄ կազմավորման սկզբնական շրջանում տվյալ արհեստածին անվանումն ամբողջությամբ արմատավորված չէր: Հատկանշական է, որ 1924 թ. Բաքվի համալսարանում կարդացած դասախոսության ընթացքում ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլոմեյ անթաքույց նշում էր. «Ադրբեջան» եզրն ընտրվել է, որովհետև, երբ կազմավորվում էր Ադրբեջանական հանրապետությունը, նախատեսվում էր, որ պարսկական և այս Ադրբեջանը մեկ ամբողջություն կկազմեն, քանի որ բնակչության կազմով դրանք շատ մեծ ընդհանրություն ունեն: Այդ հիմքով ընդունվեց «Ադրբեջան» անվանումը, սակայն, իհարկե, այժմ, երբ «Ադրբեջան» բառն օգտագործվում է երկու իմաստով՝ որպես պարսկական Ադրբեջան և հատուկ հանրապետություն, ստիպված ենք շփոթի մատնվել և հարցնել՝ ո՞ր Ադրբեջանն է նկատի առնվում, պարսկական Ադրբեջանը, թե՞ այս Ադրբեջանը¹⁷: Ականավոր գիտնականն իր մոտեցումը խնդրին արձանագրել է նաև Իրանին նվիրված աշխատության «Ադրբեջան և Հայաստան» գլխում՝ որպես «Ադրբեջան» միանշանակ նկատի առնելով պատմական Ատրպատականը¹⁸:

1933 թ. «ԽՍՀՄ ժողովուրդներ» շարքով Կովկասի ժողովուրդներին պատկերող փոստային դրոշմանիշին հայերի, վրացիների կողքին նշված են թյուրքերը (Турки), այլ ոչ թե նորահռչակ էթնոսի ներկայացուցիչները, որոնք տվյալ շարքի այլ 20 դրոշմանիշներում ևս չկան: Հետաքրքիր է խնդրո առարկա դրոշմանիշին, ի տարբերություն լեռների ֆոնին որպես ակնհայտ երկրագործ (ընտանի կենդանիներով) պատկերված վրացիների և հայերի կերպարների, թյուրքերի ներկայացումը. ընդհանուր երեք կերպարից երկուսը տղամարդ են, մեկը՝ անորոշ զբաղմունքի տեր, կքանստած, մյուսը, ըստ ամենայնի, ջրկիր (կամ ինչպես նախահեղափոխական Թիֆլիսում էին կոչում ջրկիր թյուրքերին՝ «թուլուխչի»), իսկ հեռվում նավթահորի աշտարակի ֆոնին նկատելի է կանացի ուրվապատկեր¹⁹:

¹⁶ Рейснер. 1958, 99–105; Ша‘бани. 2002, 268.

¹⁷ Бартольд. 1963, 703.

¹⁸ Бартольд. 1971, 203–214. Հայ իրականության մեջ 1927 թ. համանուն գրությամբ հանդես է եկել ՀՅԴ գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը, մասնավորապես, ընդգծելով. «Ատրպեճան խօսքը ըստ էության անուն չէ միայն, այլ բնորոշումը քաղաքական ծրագրի մը: Ատրպեճան ըսելով պետք է հասկնալ, որ չպիտի ըլլան երկու Ատրպեճաններ՝ պարսկական եւ ռուսական, եւ որ եթէ այսօր պատահաբար կեդրոնը Բագուն է, վաղը պիտի ըլլայ բուն հայրենիքի մէջ՝ Թաւրիզը» (Ռուբեն. 1927, 72): Ավելի ուշ Ռուբենը կրկին ընդգծում էր. «Պատահական չէ, որ անոր անունը Ատրպեճան է, որովհետեւ անոր առաջին նպատակը Իրանի Ատրպատականի գրաւումն է» (Ռուբեն. 1984, 208):

¹⁹ Դրոշմանիշը համարակալված է որպես № 425, նկարիչը՝ Վասիլի Զավյալով (1906–1972 թթ.), տպագրվել է 1933 թ. օգոստոսին: ԽՍՀՄ փոստային դրոշմանիշներին ադրբեջանցիներն անվանապես հայտնվում են ավելի ուշ, օրինակ, 1963 թ. ԽՍՀՄ ժողովուրդների ազգային տարազներին նվիրված դրոշմանիշների շարքում:

Նշված թյուրքերը, նույն ինքը՝ նախահեղափոխական շրջանի կովկասյան թաթարները կամ անդրկովկասյան թյուրքերը, իրենց «ադրբեջանցի» էթնոնիմը փաստացի ստացել են 1936 թ. ԽՍՀՄ (ստալինյան) սահմանադրության ընդունումից հետո՝ սեփական հանրապետության անվանումից: Սա վերջնականապես ազդարարում էր նոր իրողությունների ամրագրումը տարածաշրջանում, և եթե իրական (իրանական) Ադրբեջան-Ատրպատականի բնիկները կոչվում են ազարիներ, ապա այս դեպքում երկրանունը (geonym) հիմք հանդիսացավ նոր էթնոսի անվանման (ethnonym) համար, ինչը, ընդհանրապես, հազվադեպ է, բայց ոչ միակ օրինակը²⁰:

Նորաստեղծ կազմավորման առնչությամբ «Ադրբեջանական» անվանման ամրագրումն ընթացավ հետագա ժամանակահատվածում, ինչին հետևեց, իբր, միմյանցից տարանջատված և Արաքսի հյուսիսում ու հարավում գտնվող «երկու Ադրբեջանների» շինծու տեսության արծարծումը²¹: Այն տեղավորվում էր ԽՍՀՄ արտաքին քաղաքականության գինանոց ներդրված «Հարավային Ադրբեջանի» և «Հյուսիսային Ադրբեջանի» գաղափարախոսական դրույթի շրջանակներում²²: Հատկապես, 1940-ական թվականներին ԽՍՀՄ-ում որոշակիորեն գործածական էր տվյալ դրույթը, ինչի գործնական դրսևորումն էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Իրանի տարածքից ԽՍՀՄ զորքերի դուրսբերումից հետո ստեղծված «Ադրբեջանի ժողովրդավարական հանրապետություն» անվամբ Թավրիզ կենտրոնով խամաճիկային կազմավորումը: Թյուրք կոմունիստ Սեյիդ Ջաֆար Փիշևարիի (Միրջաֆար Ջավադզադե, 1892–1947 թթ.) գլխավորությամբ «ադրբեջանական ժողովրդական կառավարությունը» Թավրիզում գործեց 1945 թ. նոյեմբերից 1946 թ. դեկտեմբերը, իսկ իրանական զորքերի առաջխաղացումից հետո հեռացավ ԽՍՀՄ:

Ինչևէ, անկախ քաղաքական զարգացումներից՝ պատմական Ատրպատական երկրամասը, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ շարունակում է մաս կազմել Իրանին՝ հանձինս Արևմտյան Ատրպատական և Արևելյան Ատրպատական նահանգների, ինչպես նաև այլ շրջանների:

²⁰ Համանման օրինակ դիտարկվում է Բալկաններում՝ հունական պատմական Մակեդոնիա երկրամասի հույն-մակեդոնացիների կողքին՝ ի դեմս Վարդարի երկրամասում բյուզանդական կայսրության օրոք հաստատված բուլղարախոս սլավոնների՝ «մակեդոնացի ժողովուրդ» հանրույթի ամրագրման: Առաջին համաշխարհային պատերազմից հետո անցնելով Սերբիայի վերահսկողության ներքո՝ 1929–1941 թթ. Հարավսլավական թագավորության կազմում տարածքն ընդգրկվել է որպես «Վարդարյան շրջան»: Իրականում 1991 թ. Հարավսլավիայի տրոհումից առաջացած նախկին հարավսլավական Մակեդոնիայի հանրապետության (FYROM) կամ 2019 թ. ճանաչված Հյուսիսային Մակեդոնիա հանրապետության տարածքն ընդգրկում է պատմական Մակեդոնիայի մոտ 10%-ը, իսկ հանրույթի լեզուն համարվել է բուլղարերենի բարբառ կամ խոսվածք և պատկանում է հարավ-սլավոնական լեզվախմբին:

²¹ Р е з а. 2020, 19–20.

²² ԽՍՀՄ օրոք Իրանական Ադրբեջանի առնչությամբ նաև գիտական շրջանակներում ներդրված շեշտադրումներին է անդրադարձել իր մի գեղարվեստական վեպում Ա. Ի. Սոլժենիցինը (С о л ж е н и ц ы н. 2006, 302):

Ադրբեջանի հիշատակությունը «Սասնա ծռեր» էպոսի մոկաց պատումում

Հայտնի է, որ Ադրբեջանը «Հադրբեջան» ձևով նշվում է «Սասնա ծռեր»-ի մոկաց պատումներից մեկում: Բնական է, որ արևմտահայ ասացողը որևէ կերպ չէր կարող իրազեկ լինել ընդամենը 1918 թ. Հարավային Կովկասում՝ պատմական Ադվանքի տարածքում ստեղծված համանուն կազմավորմանը: Առնվազն մինչ տվյալ ժամանակահատվածը գրառված տարբերակներում որևէ նման հավանականություն պետք է բացառվեր: Մյուս կողմից, ընդհանրապես, ճիշտ չէ բացառել «Հադրբեջան»-ը, քանի որ այն առկա է XIX դ. վերջին գրառված պատումում, սակայն բոլոր դեպքերում որևէ հիշատակություն ենթակա է համապատասխան բացատրության:

Մոկացի Հովանից (Մոկսի Նորավանց գյուղից սերող Մոկացի Հեովան, Ուստենց Հեովան, Կաղ Հեովան, ծն. մոտ 1840 թ.) Գարեգին Հովսեփյանի գրառած և 1892 թ. հրատարակված տարբերակում Սասունցի Դավիթը մահից առաջ հիշում է իր երդումը՝ ամուսնացնել իրեն ծառա դարձած 40 փահլաններին, այդ իսկ նպատակով մեկնում է Գյուրջիստան, 40 կույս աղջիկ գտնելու համար: Խումբը մի ճամփաբաժնի հանդիպում է ալևոր ծերունու, հետևում է հարցուպատասխանը, ապա ծերը խորհուրդ է տալիս թողնել Գյուրջիստան գնալու մտադրությունը և մեկնել Հադրբեջան:

Էսաց. – Աղէկ աղջիկ որ կ'ուզէք, կեացէք Հադրբեջան:

Ճամբախ շանք իդու՝ էդա մէկ ճամբախ կ'իեայ Ռուսըստան, էդ մէկ ճամբախն էլ կ'երթայ Հադրբեջան:

Էլան, կեացին դեախ Հադրբեջան, կեացին Հադրբեջանայ քեաղաք ...²³:

Ակնհայտորեն այստեղ ներմուծված է վիպական-հեքիաթային բաղադրիչ՝ ճամփաբաժնին ճանապարհ ցույց տվող ալևոր ծերունու կերպարով, ինչը տարածված է հայոց բանահյուսության մեջ, մանավանդ, հեքիաթներում: Ճանապարհ ցույց տվող ծերունին սովորաբար խորհրդանշիչ է նախախնամության և գերբնական ուժերի: Միաժամանակ նկատելի է, որ բանասացի նկարագրած աշխարհագրական միջավայրը բավական նորացված է, ոչ-ավանդական, քանի որ նշված «խաչմերուկը» Վասպուրականից բավական հեռու տարածաշրջանում է՝ Վրաստան–Ռուսաստան–Ադրբեջան: Ըստ այդմ՝ խոսքը վիպական նախաձևից բավական հեռացած մի առանձնակի պատումի մասին է:

Հաջորդաբար Դավիթը զինակիցների հետ Հադրբեջանում մի գեղեցկուհի աղջկա հետ պայմանավորվում է կնության առնել նրա 40 քույրերին. երկխոսությունից պարզվում է նրանց կռապաշտ և ոչ-աստվածապաշտ լինելը: Աղջկա հարցումը («Աստուած ի՞նչ կը»)՝²⁴ պարունակում է որոշ մտահոգություն դավանական տարբերակման առումով, ինչը, փաստորեն, հետագայում դրսևորվում է Հադրբեջանի կուռքերի կողմից նորընծա զույգերի հետապնդման դրվագում: Որպես աստվածապաշտ հերոս՝ ճամփաբաժնի մոտ Դավիթը հաղթում է կուռքերին, կրկին մեկնում Հադրբեջան, գտնում և պարզում առաջին հանդիպած գեղեցկուհու ինքնությունը, այն է՝ Հադրբեջանի թագավորի աղջիկ, արդեն պսակյալ 40

²³ Սասնայ ծռեր. 1892, 137, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 219–220:

²⁴ Սասնայ ծռեր. 1892, 130:

գեղեցկուհիների տիրուհին²⁵, զմայլվում նրա գեղեցկությամբ («էն աղջկան պէս էլ աղջիկ խորոտ չ'կայ»)՝²⁶ որոշում բերել Սասուն: Հայրենիքում Դավիթը գեղեցկուհուն կնության է տալիս Փոքր Մհերին, ավանդական հարսանիք անում (յոթ օր, յոթ գիշեր), ապա Մհերը դառնում է Հաղորեջանի թագավոր: «Մհեր էլա, առից զիր կնիկ, կինաց Հաղորեջանայ քեաղաք, էլա թագաւոր»²⁷: Հոր մահվան մասին տեղեկանալով՝ Մհերը գալիս է Հաղորեջանից, կոտորում թշնամիներին Բանդիմահու կամրջից մինչև Իրան ընկած հատվածում, առնում հոր վրեժը, ապա կրկին վերադառնում է իր թագավորություն: «Հաղորեջան կինաց, թագաւորութիւն առից, թագաւոր նստաւ»²⁸:

Իր նոր թագավորությունում Մհերը կրկին հանգիստ չէ. «էլա, բար խոտ Գիւրջիստան, առից, կինաց Թուրքիստան: Յիտ դարձաւ, էլա, ուր տեղ նստաւ: Էդ էրկրքիր էլա զըմէն խարջդար. էնու սիրըցին: Եօթ տարին էնդեղ թագաւորութիւն նստաւ»²⁹: Նկարագրվածը, անշուշտ, հին վիպական ոգով է (որոշ պատումներում Մեծ Մհերը հասնում է նույնիսկ մինչև Թուրքման)³⁰, սակայն ներմուծված նոր աշխարհագրական միջավայրն աննախադեպ է: Ինչ վերաբերում է Թյուրքիստանին կամ Թուրքեստանին, ապա բանահավաքի ծանուցմամբ, բանասացն այդ անվամբ հասկանում է լեզգիներին և, ընդհանրապես, Կովկասյան լեռների բնակիչներին³¹: Թե ինչ է հասկացվում Հաղորեջանի կապակցությամբ, պատումից չի զգացվում, սակայն, ակնհայտ է, որ, համեմայն դեպս, բանասացն այն տարբերում է Թուրքեստանից (Հաղորեջանի բնակիչները կռապաշտ են, բայց ոչ թյուրք):

Հաջորդաբար Մհերը, անսալով հորեղբոր կանչին, թողնում է թագավորությունը, գալիս Սասուն, հաղթում Մըսրա ավանդական թշնամիներին, սակայն հետաքրքիր է Ձենով Օհանին ուղղված երգային հատվածը.

*Իւէրախութ խրօխպէր, վի'ր իլի,
Իմ թագաւորութիւն գեպին իմ դրի,*

²⁵ Տ. Չիթունու մշակման մեջ այս պատումի ազդեցությամբ Դավիթն իրեն եղբայրացած 40 ըմբիշների հետ մեկնում է Աղբրեջան, սակայն հասնում Գյուրջիստան, որտեղ 40 կռապաշտ գեղեցկուհիներ է գտնում և պսակում (Չ ի թ ու ն ի. 1942, 1006–1007): Այնուհետև Դավիթը գտնում է «Աղբրեջան Երկիրներու Թագաւորին» գեղեցկուհի դստերը, և պարզվում է, որ 40 գեղեցկուհիները նրա նաժիշտներն են եղել (Չ ի թ ու ն ի. 1942, 1008): Սա ևս աղավաղման և տարբեր հատվածների միմյանց կապակցման հետևանք է:

²⁶ Սասնայ ծռեր. 1892, 131: Չիթունու մշակման մեջ այս պատումի ազդեցությամբ նշվում է. «Այդ Աղջըկան պէս ալ խօրո՛տ ... տեղ մը չկա՛յ Երկրի վրայ ... Ան ալ Աղբրեջան Երկիրներու Թագաւորին Աղջի՛կն է» (Չ ի թ ու ն ի. 1942, 1008):

²⁷ Սասնայ ծռեր. 1892, 134, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 224: Չիթունին ևս հիմնվել է այս պատումի վրա. «Աղբրեջանի այդ Թագաւորի Աղջիկ {Դավիթ} նըշանեց Իր Մըհերի հետ» (Չ ի թ ու ն ի. 1942, 1013):

²⁸ Սասնայ ծռեր. 1892, 137, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 228:

²⁹ Սասնայ ծռեր. 1892, 137, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 228–229:

³⁰ Սասնա ծռեր. 1951, 127:

³¹ Սասնայ ծռեր. 1892, 137, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 228:

*Քեաղաք իմ գեորգին թասլիմ իմ էրի,
Իմ գեորգ Գյուրջու աղջկան թասլիմ իմ էրի*³²:

Փաստորեն, Միերն էպոսին բնորոշ երգային ոճով (և բառամթերքով) պատմում է, թե իր գուրգը, որպես պահպանության երաշխիք, թողել է իր թագավորության քաղաքում, որը մինչ այժմ Հադրբեջանն էր, սակայն հանկարծակի նշվում է նրա տիրուհու անսպասելի վերափոխված ինքնությունը՝ Գյուրջու աղջիկ, այսինքն՝ վրացուհի: Բանահավաքն ու հրատարակիչը սույն հատվածը չեն մեկնաբանել, 1892 թ. հրատարակության մեջ այն որևէ բացատրություն չունի, սակայն 1936 թ. համահավաք բնագրի Ա հատորի խմբագրությունը նկատել է աղադակող հակասությունը («Հադրբեջանի թագավորի աղջիկը ... այստեղ հիշվում է իբրև Գյուրջու աղջիկ»)՝³³:

Անշուշտ, երգային հատվածի առկայությունը միանշանակ վկայում է հոգուտ Գյուրջիստանի ավանդականության: Սակայն սա միակ հակասությունը չէ. միևնույն պատումում 40 զինակիցներին Փոքր Միերն ամուսնացնում է Բաղդադում Կուպ դևից ազատած 40 թագավորի աղջիկների հետ (ակնհայտորեն հոր օրինակով), սակայն երբ իրեն էլ ցանկանում են ամուսնացնել, հանկարծ հիշում է Վրաստանի իր կնոջը. «Իս չիմ ուզը, մէ կնիկ ունիմ՝ գեո՛յ Գյուրջիստան (ինկաւ միտ կնիկ. էսաց՝ վա՛յ, ես էլ կնկան տէր իմ)»³⁴:

Սա վերջնականապես արդեն ամբողջությամբ հակասության մեջ է մտնում միևնույն պատումում շարունակ կրկնված Հադրբեջանի հետ, և, ըստ ամենայնի, ուղղակի սպրդել է իրականացված խմբագրության ժամանակ: Վերոհիշյալը թույլ է տալիս ենթադրել, որ երկրանվան նախնական ձևը տվյալ պատումում Գյուրջիստան-Վրաստանն է, ինչը տրամաբանական կարող է լինել նաև պատմական առումով, եթե նկատի առնենք հայազգի Բագրատունիների թագավորելը Վրաստանում և հայ-վրացական միջդինաստիական ամուսնությունները:

Սակայն հակասությունները սրանով չեն ավարտվում, և ազգականներին Սասունում թաղելուց և ծնողների գերեզմաններին այցելելուց հետո Միերը վերադառնում է Հադրբեջան՝ կրկին հիշելով կնոջը («էկաւ զծին խեծաւ, քից, կինաց Հադրբեջան»)՝³⁵: Տեղում Միերը գտնում է իր անշարժ մնացած գուրգը, մահացած կնոջը, որին, կտակ-երկտողի համաձայն, տանում է Սասուն և թաղում մոր կողքին: Հետաքրքիր է կնոջ գրավոր խնդրանքը. «Քենէ կ'խնդրիմ ... էս կոռապաշտ խողը մէջ չթորկիս»³⁶: Ընդամին, սույն հատվածն ընդգրկվել է 1939 թ. համահավաք տարբերակում³⁷: Եթե այլ պատումների համար սա բնական է հնչում, ապա այս դեպքում Գյուրջիստան-Հադրբեջան միմյանց հերթազայող խառնաշփոթի

³² Սասմայ ծոեր. 1892, 138, հմմտ. Սասնա ծոեր. 1936, 230: Երգի վերափոխված տարբերակն ընդգրկվել է 1939 թ. համահավաք տարբերակում՝ «Իմ գուրգ Պաճիկ թագավորի աղջկան պահ եմ տվե» տողով (Սասունցի Դավիթ. 1939, 361):

³³ Սասնա ծոեր. 1936, 230:

³⁴ Սասմայ ծոեր. 1892, 146, հմմտ. Սասնա ծոեր. 1936, 238–239, Սասնա ծոեր. 1977, 501:

³⁵ Սասմայ ծոեր. 1892, 147, հմմտ. Սասնա ծոեր. 1936, 240:

³⁶ Սասմայ ծոեր. 1892, 147, հմմտ. Սասնա ծոեր. 1936, 240:

³⁷ Սասունցի Դավիթ. 1939, 326, հմմտ. Սասունցի Դավիթ. 1981, 312:

մեջ այն խոսում է հոգուտ Հաղորեջանի. հայ բանասացը չէր կարող Վրաստանը կռապաշտների երկիր համարել:

Այսպիսով՝ իր բազմաթիվ հակասություններով աչքի ընկնող այս պատումի առնչությամբ կրկին հարց է առաջանում՝ Հաղորեջան, թե՞ Գյուրջիստան: Սա կարող է ուղղակի օրինակ լինել տարաբնույթ պատումների և վիպական բաղադրիչների անկանոն ու խառնաշփոթ միաձուլման: Ըստ այդմ՝ համոզիչ պատասխանի համար անհրաժեշտություն է ներկայացնում բանասացի ինքնության հետազա պարզաբանումը:

Բանասացներ և բանահավաքներ

Բանահավաք Գ. Հովսեփյանի 1904 թ. հաղորդմամբ՝ առնվազն 1890 թ. մոկաց բանասաց Հովանը գիշերապահ է եղել Էջմիածնի Մայր Աթոռի ճեմարանում. «Կարդալ և գրել չգիտէր, բայց իւր պանդուխտ հայրենակիցների շրջանում համարում էր որպէս բանիմաց մարդ: Մի քանի տարուց ի վեր վախճանուած է արդէն իւր հայրենի գիւղում»³⁸: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ բանասացն առժամանակ փոխադրվել և հանգրվանել է Ռուսական կայսրությունում (Արևելյան Հայաստան), ապա՝ վերադարձել ծննդավայր, որտեղ վախճանվել է մինչև 1904 թ.:

Մեկ այլ մոկաց բանասացից՝ Մոկացի Վարդանից, բանահավաք Սարգիս Հայկունու ավելի ուշ գրառած և 1901 թ. հրատարակած տարբերակում Սասնա Դավթի ընտրյալ Խանդութը Թավրիզից է («Թավրիզու խողից»)՝³⁹, իսկ Փոքր Միերի համար հարսնացու բերվում է Գյուրջիստանից⁴⁰, ինչպես այլ պատումներում: Պատմական որևէ աստառ փնտրելն այս դեպքում միանգամայն անիմաստ է, քանի որ Թավրիզը նորաբանություն է, հակառակ դեպքում պետք է նշվեր հայկական ձևով՝ Դավրեժ, ինչը գործածական էր տակավին XVII–XIX դդ.: Այս դեպքում բացատրությունը գտնում ենք բանասացի մասին Հայկունու ծանուցման մեջ, որի համաձայն՝ Մոկացի Վարդանն ապրել է Արճեշում, Աբաղայի Նազարավա գյուղում և 3–4 տարի ևս՝ պատմական Արտազ գավառի Ղըրխբուլաղ գյուղում (Սբ. Թադևոս առաքյալի վանքին մերձակա), իմա՝ իրանական Ատրապատականում, «որով իւր բարբառն խառնուրդ մը կը կազմէ»⁴¹: Բնականաբար, բարբառը փոխելով, փոփոխվել են նաև ավանդական տեղանունները, տեղայնացվել ու հարմարեցվել նոր միջավայրին, ինչը դիտարկվում է բազմաթիվ այլ պատումներում ևս:

Հակառակ դրան՝ Թավրիզին կապակցված Հաղորեջանը Մոկացի Վարդանը չի հիշատակում, ինչը սովորական է մյուս մոկաց բանասացի պարագային: Գ. Հովսեփյանի գրառած տարբերակով՝ Խանդութն Իրանից է, հիշատակվում է «Իրանայ քեաղաքը», իսկ նրա հայրենիքը Խոյա քաղաքն է⁴², և ոչ Թավրիզը:

³⁸ Յ ո վ ս է փ ե ա ն ց. 1904, 39, հմմտ. Յ ո վ ս է փ ե ա ն ց. 1905, 39:

³⁹ Էմինեան Ազգագրական ժողովածու (ԷԱԺ). 1901, 38–42, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 360–362:

⁴⁰ ԷԱԺ. 1901, 44–45, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 369–370:

⁴¹ ԷԱԺ. 1901, 19:

⁴² Սասնայ ծռեր. 1892, 121, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 208:

Ընդ որում, այլ մոկաց բանասացի պատումում Խոյը հարազատ վայր է՝ ավագ հերոսներից Քեռի Թորոսի տունը. հոր հետ գժտությունից հետո այնտեղ է ապաստանում Փոքր Միերը⁴³: Ավելի ուշ ապարանցի բանասացից գրաված պատումում ևս նշվում է «Խոյա Խանդութ խանումը»⁴⁴, նմանապես կրկնվում է քեռիների միջոցով Խոյի հետ Փոքր Միերի կապը («Տղեն ինադ կէնա ու ... Խոյ, Հա՛յրէ, քեռիներու տուն») ⁴⁵:

Ինչպես նշվել է, Մոկացի Հովանը ևս պանդխտության բերումով հայտնվել է Մոկսից դուրս աշխարհագրական միջավայրում, ըստ այդմ՝ ներմուծել է «Հադրբեջան» երկրանունը էպոսի իր ասացած տարբերակ: Միանշանակ դրա արտահայտությունն է Հադրբեջանի հետ Ռուսաստանի հիշատակությունը⁴⁶, ինչն արդեն վկայում է, որ էպոսին ոչ համահունչ աշխարհագրական երկրանունները ներմուծվել են համապատասխան վայրերում առժամանակ բնակված բանասացների կողմից և որևէ ավանդականություն չեն ենթադրում:

1908 թ. հրատարակված «Հայ ժողովրդական վէպը» ուսումնասիրության մեջ Մ. Աբեղյանը հետևյալ կերպ է մեկնաբանել Մոկացի Հովանի տարբերակում նկատված շփոթը. «Դաւիթն առնում է Իրանայ քաղաքի տիրոջ աղջկան՝ Խանդութ խաթունին, որից ունենում է անժառանգ և անմահ Միերին: Այս Միերի կինն է Գոհար խաթուն, որ պատմուածքի մէջ մէկ ադրբեջանցի է դուրս գալիս, մէկ գիրջիստանցի կամ գիրջու աղջիկ»⁴⁷: Տվյալ հակասությունն Աբեղյանը տարբեր առիթներով բազմիցս է նշել իր վաղ շրջանի գործերում, ի վերջո, հետևյալ կերպ բացատրել. «Մի պատմուածքով ... Դաւիթ ուզում է Գիրջիստան գնալ աղջիկ բերելու, բայց ճանապարհին միտքը փոխելով՝ գնում է Հադրբեջան, այսինքն Ատրպատական, որի թագաւորի աղջկայ նաժիշտներին առնում է իւր փահլևաններին, իսկ իրեն՝ թագաւորի աղջկան բերում Սասուն, պսակում Միերի հետ և ուղարկում Հադրբեջան թագաւոր: Նոր այստեղից Միերը գնում է Գիրջիստան: Բայց շարունակութեան մէջ կինը մէկ Հադրբեջանում է յիշում, մէկ Գիրջիստանում: Պարզ կերպով երևում է, որ Հադրբեջանը նոր է փոխանակել {փոխարինել} Գիրջիստանին, որովհետեւ Միերի կինը միշտ գիրջու աղջիկ է յիշում: Սակայն Իրան, Իրանայ քաղաք և Թաւրիզ մի քանի պատմուածքների մէջ հաստատուն կերպով դրւում է իբրեւ Խանդութի հայրենիք»⁴⁸: Այլ առիթով ևս Աբեղյանը նշել է, որ «Վիպասանը պատմութեան շարունակութեան մէջ անսպասելի կերպով շուտ է տալիս Գիրջիստանի տեղ Հադրբեջան է դնում և այնուհետև այդ երկու անունը խառն գործածում»⁴⁹: Աբեղյանը շեշտում է մի կարևոր և որոշիչ փաստարկ ևս. «Երգի մէջ, որ անելի հին է, յիշում է «Գիրջու աղջիկ»⁵⁰: Ըստ այդմ՝ եզրակացվել է, թե տարբերակում «Գիրջիստանի տեղ ... աղաւաղմամբ մտել է

⁴³ Սասնա ծռեր. 1936, 296:

⁴⁴ Սասնա ծռեր. 1979, 328:

⁴⁵ Սասնա ծռեր. 1979, 339:

⁴⁶ Սասնայ ծռեր. 1892, 130, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 220:

⁴⁷ Ա ք ե ղ ե ա ն. 1908, 9:

⁴⁸ Ա ք ե ղ ե ա ն. 1908, 65:

⁴⁹ Ա ք ե ղ ե ա ն. 1908, 91:

⁵⁰ Ա ք ե ղ ե ա ն. 1908, 91:

նաև Հաղրեջան»⁵¹: Ավելի ուշ՝ 1951 թ. հրատարակված էպոսի հատորում ընդգրկված ճյուղագրության մեջ Մոկացի Հովանի ասացած «Դավիթ և Մհեր» պատումը նույն կերպ է բնորոշվել. «Սրա (Փոքր Մհերի) կինը պատումիս մեջ մեկ՝ Հաղրեջանա թագավորի (անունը չկա) աղջիկն է դուրս գալիս, մեկ՝ Գուրջու աղջիկ»⁵²: Ամեն դեպքում պարզ է, որ հնարավոր նախաձևին տեղ-տեղ փոխարինած Հաղրեջանը բանասացի (նաև բանահավաքի) համար միևնույն իրանական Ատրպատականն էր և ոչ այլ ինչ:

Միաժամանակ Աբեղյանը, հետևելով պատմական դպրոցի մոտեցումներին, առաջին անգամ հպանցիկ Հաղրեջանը փորձել է կապակցել XII-XIII դդ. գոյություն ունեցած Ատրպատականի աթաբեկությանը և ենթադրել, թե Սասունը (Սասնա իշխանությունը) հարաբերություններ է ունեցել նման հարևանի հետ⁵³: Սակայն իրականում 100 տարուց էլ քիչ պատմական կարճ ժամանակահատվածում գոյություն ունեցած աթաբեկության և Սասնա Թոռնիկյան իշխանության միջև չեն արձանագրվել բավարար հարաբերություններ, որոնք կարող էին շոշափելի հետք թողնել բանահյուսության մեջ: Հյուսիսային Իրանում հիմնված աթաբեկության հիմնադիրն էր ծագումով ղվիչաղ Շամս աղ-Դին Իլդեգիզը կամ հայկական աղբյուրների Ելտկուզը (մահ. 1175 թ.): Տվյալ թյուրք-սելջուկյան կազմավորումը գոյություն է ունեցել 1136–1225 թթ., նվաճել է Նախիջևանը, Սյունիքը, պատերազմել Զաքարյանների և Վրաց թագավորության դեմ, կործանվել 1225 թ.՝ Զալալեդդին Խորեզմշահի նվաճումների հետևանքով⁵⁴: Ելտկուզ աթաբեկի տիրապետության և Սասունի Վիգեն իշխանի հարաբերությունների մասին հակիրճ հիշատակում է XIII դ. պատմիչ Վարդան Արևելցին (Վարդան Վարդապետ), ընդ որում, օտար նվաճողը նշվում է որպես «զօրավարն Պարսից Ելտկուզ»⁵⁵: Սա համահունչ էր ժամանակի հայ պատմագրության ոգուն. նորելուկ նվաճողներն ավանդույթի ուժով հիմնականում հենց այդպես էլ կոչվում էին: Այսինքն՝ կրկին բացառվում է Աղրեջանի գործածումը:

Ամեն դեպքում հետագա ուսումնասիրություններում, ըստ երևույթին, հաշվի առնելով Աղրեջանի հիշատակությունը աղավաղված պատումում և թեմայի նվազ տարողունակությունը, Աբեղյանն այլևս չի անդրադարձել խնդրին:

Պաճիկ թագավոր

Հարկ է նաև անդրադառնալ ապարանցի բանասացից Գարեգին Հովսեփյանի գրառած և 1892 թ. հրատարակած «Սասնայ ծռեր» պատումում Գոհարի հոր՝ Պաճիկ թագավորի կերպարին և անվան ստուգաբանությանը: Թեև ընդամենը

⁵¹ Ա ք ե ղ ե ա ն. 1908, 174, հմմտ. Ա ք ե ղ յ ա ն. 1966, 422:

⁵² Սասնա ծռեր. 1951, 880:

⁵³ Ա ք ե ղ ե ա ն. 1908, 66, 76:

⁵⁴ Արդի աղրեջանական շրջանակների կողմից տվյալ կազմավորումը ներկայացվում է որպես «աղրեջանական աթաբեկություն»:

⁵⁵ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի. 1862, 124: Վերը նշված թեմայով Ս. Կանայանը ժամանակին արել է որոշ մեկնաբանություններ (Կ ա ն ա - յ ե ա ն ց. 1906, 334–335), որոնց վստահաբար ծանոթ է եղել նաև Մ. Աբեղյանը:

նշվում է Պաճիկ թագավորի անանուն քաղաքի մասին, այն բազմիցս կապակցվել է Ատրպատականին:

Նախևառաջ, մարտադաշտում Մըսրա Մելիքին հաղթելուց հետո և նրա զորքին հալածելիս կայանում է Դավթի ու Մըսրա զորքի կազմում գտնված Արևելոց կողմի Պաճիկ թագավորի ծանոթությունը: Դավթի հարձակումը կանխելու համար Պաճիկը դիմում է նրան՝ խնդրելով չոչնչացնել իր զորքը, այլ բարեկամական պայման կապել. «Մկայ ես լե ազաբ, դու լե ազաբ, մենք օր կարգուանք քրդի տղայ էղաւ, ընծի ախչիկ, իմ ախչիկ տամ քու տղին, քրդի ախչիկ էղաւ, ընծի տղայ, քու ախչիկ տուր իմ տղին»⁵⁶: Այսինքն՝ խոսքն օրորոցախազով ամուսնության մասին է, ինչի առաջարկը Դավթը սիրով ընդունում է և դաշն կապում մի յուրօրինակ վկայակոչմամբ. «Վերի դէն Աստուած վկայ բռնին, ներքի դէն լե Դաւթի տկի ձին»⁵⁷: Այս կերպ Պաճիկն իր զորքով քաշվում և գնում է, իսկ Դավթը մեկնում Մըսր: Սա, հիրավի, մի ասպետական մեծահոգություն է, որ իրապես համեմատելի է Փալստոս Բուզանդի ավանդած պատմության հետ՝ 371 թ. Ձիրավի ճակատամարտում պարսից զորքերի կազմում գտնված Աղվանքի Ունայր թագավորի և հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի շփման մասին: Մուշեղը խնայում է Ունայրին՝ ասելով. «զի այր թագաւոր ես և թագ ունիս. ես ոչ սպանից զայր թագաւոր»⁵⁸, ապա թույլ տալիս նրան ութ հեծյալով քաշվել մարտադաշտից դեպի Աղվանք: Հետագայում Ունայրն, իրոք, դառնում է հայոց բարեկամ, ավելին՝ գաղտնաբար լուր է փոխանցում Մուշեղին պարսից նոր հարձակման պատրաստությունների մասին⁵⁹: Միանշանակ հայոց սպարապետի վարքականոնին է հետևում նաև Դավթը, ինչը հիմք է տալիս որոշակիորեն ենթադրել «Պարսից պատերազմ» հերոսավեպի վերհուշի առկայությունը սույն պատումում:

Միևնույն պատումի համաձայն՝ հետագայում Դավթի մահից հետո Պաճիկ թագավորի քաղաքի վրա է արշավում Փոքր Միերը: Լուրն առնելով՝ Պաճիկն ընդառաջ է գնում և հայտնում, թե ուխտ է արել Դավթի հետ զավակների ամուսնության համար, ուստի առաջարկում է ամուսնանալ Գոհարի հետ, ինչին Միերը համաձայնում է⁶⁰: Հատուկ նշվում է Գոհարի աստղապաշտ (աստղագուշակ) լինելը⁶¹, ինչը ենթադրում է նրա կռապաշտությունը՝ ի տարբերություն աստվածապաշտ ու խաչապաշտ Սասնա դյուցազնի, որը, սակայն, չի խորշում դիմել նրա «աստղ նայելու» հմտությանը: Հաջորդաբար Միերը պատերազմից հետո խնդրում է Պաճիկից վերցնել Գոհարին և վերադառնալ Սասուն, ինչը բավարարվում է. հայրը նժույգ է տրամադրում դստերը⁶²: Պաճիկի դերակատարությունը հենց այսքանով էլ ավարտվում է, Միերի վերջին այցի ժամանակ նա այլևս չի նշվում, ըստ այդմ՝ Գոհարի մահվամբ հասկացվում է նաև նրա վախճանված լինելը:

⁵⁶ Սասնայ ծոեր. 1892, 39, հմմտ. Սասնա ծոեր. 1944, 78:

⁵⁷ Սասնայ ծոեր. 1892, 39, հմմտ. Սասնա ծոեր. 1944, 78:

⁵⁸ Բ ո լ զ ա ն դ. 1987, 304:

⁵⁹ Բ ո լ զ ա ն դ. 1987, 307:

⁶⁰ Սասնայ ծոեր. 1892, 54–55, հմմտ. Սասնա ծոեր. 1944, 95–97:

⁶¹ Սասնայ ծոեր. 1892, 55, հմմտ. Սասնա ծոեր. 1944, 96:

⁶² Սասնայ ծոեր. 1892, 59, հմմտ. Սասնա ծոեր. 1944, 101:

Պաճիկ թագավորի կերպարով հանդերձ՝ հենց այս պատումը հիմք է հանդիսացել 1939 թ. էպոսի համահավաք տարբերակի վերջին ճյուղի համար, որը կազմել է Ա. Ղանալանյանը: Բովանդակային մանրամասները գրեթե ամբողջությամբ կրկնվում են⁶³:

Հետաքրքիր է Պաճիկի ներկայանալը. «Ես արևելոց կողմի մարդն եմ»⁶⁴: էպոսի համահավաք բնագրի Բ հատորի կազմողների կողմից կերպարը նշվում է որպես «Արևելոց Պաճիկ թագավոր»⁶⁵: Ընդհանրապես, էպոսի պատումներում և, մանավանդ, հեքիաթներում, Հայաստանը կոչվում է «Արևելք», իսկ հայոց թագավորը՝ «Արևելից թագավոր» («Արևմտից թագավորը» խորհրդանշում էր հիմնականում Արևելահռոմեական կայսրությունը կամ Բյուզանդիան)⁶⁶: Եթե նկատի առնենք Հայոց արևելից կողմերը (Արևելից կողմանք Հայոց), այն է՝ Արցախի, Գարդմանի, Ուտիքի և Փայտակարանի երկրամասերը⁶⁷ կամ Հայոց Աղվանքը, ապա առավել ևս աղերսներ են դիտարկվում «Պարսից պատերազմի» աղվանից Ուռնայր թագավորի կերպարի հետ: Այսպիսով՝ Պաճիկն ընկալվում է որպես հարազատ միապետ կամ առնվազն ազգակից թագավորության տիրակալ:

Ծագումնաբանորեն «Պաճիկը» համեմատելի է 484 թ. Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության ժամանակ պարսից Նիխոր զորավարի հետ Մարդպետական գնդից որպես պատգամավոր ուղարկված Պաճուկի անվան հետ, որին հիշատակում է V դ. պատմիչ Ղազար Փարպեցին («զՊաճուկ ի Մարդպետական գնդէն»)⁶⁸: Հ. Աճառյանը նշում է Խորենացու երկից հայտնի հայկյանների «Պաճույճ» անունը⁶⁹, որը «Պաճոճ» և «Պաճույճ» ձևերով հիշատակվում է նաև հետագա հայոց ու վրաց պատմագրական աղբյուրներում, դրա ծագումը կապակցում «զարդ, զարդարանք» իմաստով հայերեն «պաճոյճ» արմատին⁷⁰: Բացի այդ, վկայված է «պաճոյ» («պաճօ») բառը՝ «մեծ և տափակ» (քթի մասին)՝ «տափակաքիթ» իմաստով⁷¹: Բառը նշվում է նաև այլ ձևերով՝ «պաճեան», «պաճէն», «պատճիկ»⁷²: Ըստ էության, նույնիսկ էպոսի պատումներում այս կերպ պահպանվել է հայոց Ատրպատականի մասին պատմական վերհուշը⁷³:

⁶³ Սասունցի Դավիթ. 1939, 356–361:

⁶⁴ Սասմայ ծռեր. 1892, 39:

⁶⁵ Սասնա ծռեր. 1944, 78:

⁶⁶ Սասնա ծռեր. 1951, 824:

⁶⁷ Ի տարբերություն Մեծ Հայքից IV–V դդ. անջատված և Աղվանքին միացված երկրամասերի՝ Փայտակարանը միացվել էր Ատրպատականին:

⁶⁸ Փ ա ր պ ե ց ի. 2003, 2355: Ս. Կանայանը 1910 թ. մասնակի անդրադարձել է թեմային (Կ ա ն ա յ ե ա ն ց. 1910, ԺԹ):

⁶⁹ Տարբեր ձեռագրերում՝ նաև Պայճոյճ, Պայոյճ (Խ ո ր ե ն ա ց ի. 2003, 1813):

⁷⁰ Հմմտ. Զարդ, Զարդար անունները (Աճառյան. 1948, 220): Ըստ Ս. Մալխասյանցի՝ «պաճոճանք» և «պաճոճված, զարդարված» (Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1945, 43):

⁷¹ Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1945, 43:

⁷² Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. 1837, 591, Գ ա բ մ ա ճ ե ա ն. 1910, 1113, 1117:

⁷³ Ա. Իսահակյանը «Սասմա Մհեր» վիպերգի մշակման 1937–1939 թթ. սկզբի տարբերակում ընդգրկել է միևնույն կերպարը՝ «Պաճեկ, Պաճո թագավոր» (Ա - բ ե ղ ա ն. 1975, 147): Ն. Զարյանի «Սասնա Դավիթ» գեղարվեստական մշակման մեջ Պաճիկը Բաղդադի թագավորն է (Զ ա ը յ ա ն. 1966, 173):

Նմանապես եթե հաշվի առնենք, որ ուշ միջնադարում արաբներին ավանդաբար «տաճիկ» էին կոչում (ինչն ավելի ուշ տարածվեց օսման-թուրքերի վրա), ապա «Պաճիկ» անվան դեպքում միանգամայն հավանական է համահնչյուն հակադրությունը, ինչը, օրինակ, դիտարկվում է «Խաչիկ» անվան պարագային («Վաստկե Խաչիկ, ուտե տաճիկ») ⁷⁴:

Այլ պատումներում Պաճիկ թագավորի կերպարը չի հանդիպում: Որոշ տարբերակներով Գոհարը Բաղդադից է, տեղի խալիֆի դուստր ⁷⁵, իսկ օրորոցախազով զավակների ամուսնության պայմանը նշվում է Դավթի և Հալեպի խալիֆի միջև ⁷⁶:

Աբեղյանն ընդդեմ Աբեղյանի

Միայն 28 տարի անց՝ արդեն ԽՍՀՄ օրոք, 1936 թ. Աբեղյանը կրկին անդրադարձել է Հաղրբեջանին և Մոկացի Հովանի պատումին, երբ կազմվում էր էպոսի համահավաք բնագիրը ու Աբեղյանը ղեկավարում էր այդ աշխատանքները: Պատումը միևնույն աղավաղված կերպով, առանց որևէ խմբագրման, ընդգրկվել է «Սասնա ծռերի» Ա հատորում, իսկ առաջաբանում Աբեղյանը կրկին փորձել է Հաղրբեջանը կապակցել XII–XIII դդ. Ատրպատականի աթաբեկությանը՝ ենթադրելով, թե Սասունը հարաբերություններ է ունեցել նման հարևանի հետ ⁷⁷: Փաստացի Աբեղյանն արդեն այնպիսի տեսություններ էր փորձում զարգացնել, ինչի համար ժամանակին քննադատում էր այլոց, օրինակ, Ստեփան Կանայանին ⁷⁸:

Այդքանն էլ բավարար էր, որ 3 տարի անց Հաղրբեջանը մտցվեր էպոսի համահավաք տարբերակ, ինչը համահունչ էր ժամանակի իշխող գաղափարախոսությանը: Ակնհայտ էր, որ Հաղրբեջան–Աղրբեջանի հիշատակությունն ամեն դեպքում երբեք չէր կազմել այն պատկառելի և վճռական նշանակություն ունեցող քանակը, որի հաշվառմամբ տվյալ երկրանունը կարելի էր և պետք էր ընդգրկել համահավաք տարբերակում: Մանավանդ, եթե հաշվի առնվեին վերը նշված իրողությունները և Առան-Շիրվանի տարածքում նոր կազմավորմամբ 1918–1920 թթ. հետո առաջացած տարածաշրջանային աշխարհագրական ու ազգագրական շփոթը: Սակայն կար գաղափարախոսական պահանջ, և այն ամբողջությամբ բավարարվել է՝ բանահյուսությունը ծառայեցնելով իշխող գաղափարախոսությանը:

1939 թ. համահավաք տարբերակում «Աղրբեջան» երկրանվան ներթափանցումն այլևս կատարված փաստ էր ⁷⁹, և արդեն կարևոր չէր՝ Աբեղյանն իրանական

⁷⁴ Սասնա ծռեր. 1999, 410:

⁷⁵ Սասնա ծռեր. 1979, 230:

⁷⁶ Սասնա ծռեր. 1979, 290–291:

⁷⁷ Սասնա ծռեր. 1936, ԻԱ–21:

⁷⁸ Ա ք ե ղ յ ա ն. 1966, 544–548:

⁷⁹ Սասունցի Դավիթ. 1939, 326, հմմտ. Սասունցի Դավիթ. 1981, 280:

Ատրպատականը նկատի ունենալով, թե՛ մեկ այլ տարածք: Ռուսերեն թարգմանությունը, ընդհանրապես, հեռացել էր բնագրից և դարձել չհանգավորված ազատ շարադրանք:

И в Гюрджистане он побывал.

И в Азербайджане он побывал ...⁸⁰

Սասնա ծռերն այլևս փոխադրվում էին Արևելյան Հայաստան, ռուսական Կովկասին մոտ, ինչն առիթ էր ընձեռնում ավելորդ անգամ թմբկահարել «խորհրդային ժողովուրդների դարավոր բարեկամության» թեման: Այս դեպքում նման պատկեր էր ստեղծում ոչ թե «վէպն ինքն իրեն հակասելով»⁸¹, այլ արդեն Աբեղյանն էր հակասում ինքն իրեն:

Բնականաբար, Աբեղյանը կրկին փորձել է Հաղորեջանի համար որևէ բացատրություն տալ՝ միանգամայն գիտակցելով դրա նույնացման անթույլատրելիությունը նորակազմ Ադրբեջանական ԽՍՀ տարածքի հետ: Վերոհիշյալ ծանուցումները կրկնվել են այլ հետագա հրատարակություններում ևս, իսկ «Հաղորեջանա քաղաքն» ուղղակի նույնացվել է Թավրիզի հետ⁸², թեև պատմական կարճ ժամանակահատվածում գոյություն ունեցած Ատրպատականի աթաբեկության կենտրոնն իրականում Նախիջևանն էր:

Աբեղյանի կարգի գիտնականը միանշանակ չէր կարող տարիներ անց ընդունել թեզեր, որոնց բացատրությունը ժամանակին հենց ինքն էր տվել և հերքել: Էպոսի համահավաք բնագրի կազմման ընթացքում նման շեշտադրումներ, ըստ ամենայնի, ներմուծվել են համակարգողներից պրոլետգրող և «կարմիր պրոֆեսոր» Գևորգ Աբովի ուղղորդմամբ, որը, փաստորեն, պատասխանատու էր կուսակցական-գաղափարախոսական գծի համար՝ լինելով ոլորտից միանգամայն հեռու անձ: 1938 թ. դեկտեմբերին կայացած էպոսի 1000-ամյակի հոբելյանական կոմիտեի նիստին Աբեղյանը նշում էր Աբովի «շտապեցումները», որոնց հետևանքով «էպոսի համահավաք բնագրի հյուսելը շատ շտապ է կատարվել»⁸³: Ակնհայտ է, որ այս դեպքում ևս Աբեղյանը համակերպվել է և տեղի տվել ճնշումներին: Իսկ շարունակականության պարագային ճնշումները կարող էին վերաճել բռնադատման, ինչի ակնբախ օրինակն էր էպոսի համահավաք տարբերակի աշխատանքները համակարգող խմբի անդամ Կարապետ Մելիք-Օհանջանյանի ձերբակալությունը 1937 թ. և հետագա դատապարտությունը: 1939 թ. համահավաք տարբերակի կազմողների շարքում նրա անունն այլևս բացակայում է, աշխատակցությունը նշվում է միայն 1944 թ., երբ ազատ էր արձակվել:

⁸⁰ Давид Сасунский. 1939, 333.

⁸¹ Ա ր Ե Ղ Ե ա ն. 1908, 175:

⁸² Սասնա ծռեր. 1951, 821: Հիմնվելով ԽՍՀՄ շրջանի ադրբեջանցի բանասերների գրությունների վրա՝ թուրք հետազոտող Ֆ. Թյուրքմենն անդրադարձել է թեմային, սակայն «հայ մշակույթի նկատմամբ թուրք ժողովրդական գրականության ազդեցության» տեսության համատեքստում Խանդուդը (Handud) նշվում է որպես «մուսուլման աղջիկ» և «Ադրբեջանի շահի դուստր» (Türkmen. 1992, 68–69):

⁸³ Ա ր Ե Ղ Ե ա ն. 1985, 638:

Ադրբեջանի հիշատակությունը «Սասնա ծռեր» էպոսի Շաքրախի պատումում
 Ադրբեջանը «Հաղորբեջան» ձևով նշվում է շատախցի բանասաց Ազիզ Ղա-
 րիբյանից 1933 թ. Աշտարակում Կ. Մելիք-Օհանջանյանի գրառած «Դավթի կոփվը
 Մսրա Մելիքի հետ» պատումում, որն ընդգրկում է հենց միայն տվյալ դրվագը:

Մասնավորապես, մենամարտի դրվագում Դավիթը հարվածի համար թափ
 հավաքելու նպատակով գնում և հեռվից է արշավում հակառակորդի ուղղությո-
 յամբ.

*Տավիթ սրեղեն գընաց չուր Հաղորբեջան,
 Տարցավ, եկավ՝ ըզթուր զարկեր Մըսրա Մելքին ...⁸⁴:*

Որևէ այլ կերպ այս երկրանունն այլևս չի հիշատակվում: Կ. Մելիք-Օհանջան-
 յանի ծանուցմամբ՝ այս և այլ աշխարհագրական անուններն էպոսի հետ կապված
 չեն, այլ ուղղակի բերված են տարածության հեռավորությունը ցույց տալու հա-
 մար⁸⁵, ինչն այլ պատումներում սահմանափակվում է Սասնա և Վասպուրականի
 տարածքով կամ ընդհանուր տարածաշրջանով (Հալեպ և այլն): Միևնույն դրվա-
 գում նույն կերպ նշվում են Շուշին ու Ղարաբաղը, որոնք ևս տարածաշափական
 պատկերավոր արտահայտման արդյունք են, ինչպես ավելի ուշ գրառված մեկ այլ
 պատումում Արևելյան Հայաստանի տեղանունները (Դարալագյազ, Ջանգե-
 գուր)⁸⁶:

Բանահավաքի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ բանասացն
 Արևմտյան Հայաստանում աստանդական կյանք է վարել, հալածվել իշխանութ-
 յունների կողմից, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ միա-
 ցել է հայ կամավորական ուժերին և 1917 թ. համերկրացի գաղթականների հետ
 հասել մինչև Բաղդադ⁸⁷:

Ըստ էության, հենց կամավորական ուժերի կազմում բանասացը ժամանակին
 նահանջել է Իրան, Ատրպատական, ինչպես Վանի տարածաշրջանի բնակչութ-
 յան մի մասը, այնուհետև անցել Իրաք: Էպոսին ոչ բնորոշ երկրանվան և տեղ-
 անունների ներմուծումը կրկին աշխարհագրական միջավայրը փոխած բանա-
 սացի անձնական փորձառության արդյունք է: Ըստ այդմ, Ադրբեջանի դիպվա-
 ծային հիշատակությունն էպոսի այս պատումում որևէ արժեք չի ներկայացնում:

Ադրբեջանի հիշատակությունը «Սասնա ծռեր» էպոսի Մշո պատումում

Աբեղյանի մահից 7 տարի անց՝ 1951 թ., հրատարակվում է էպոսի Բ հատորի
 Բ մասը, որի խմբագիրը կրկին Աբեղյանն է՝ աշխատակցությամբ աքսորից վե-
 րադարձած և Երևանում վերահաստատված Մելիք-Օհանջանյանի: Ըստ էութե-
 յան, խոսքը դեռևս Աբեղյանի ողջության օրոք երկու ականավոր գիտնական-
 ների համագործակցությամբ կազմված նյութերի հրատարակության մասին է:

⁸⁴ Սասնա ծռեր. 1936, 813:

⁸⁵ Սասնա ծռեր. 1936, 813:

⁸⁶ Սասնա ծռեր. 1979, 146:

⁸⁷ Սասնա ծռեր. 1936, 787:

Հատորում ընդգրկված Ի պատումը («Սասունա Դավիթ») ևս ունի հիշատակություններ Ադրբեջանի մասին, ըստ այդմ՝ անհրաժեշտություն է ներկայացնում բանասացի և շարադրանքի մանրամասների առանձնակի քննությունը: Պատումը գրառված է 1915 թ.՝ անհայտ բանահավաքի կողմից⁸⁸, բանասացը՝ Հարություն Դավթյան՝ ծն. 1876 թ., Մշո Շողգոմ (Սողգոմ) գյուղից, գրագետ, լեզուն անաղարտ չէ, գրականի հետ խառը⁸⁹: Այլ նշումներ 39-ամյա բանասացի կամ բանահավաքի մասին պատումի առաջաբանում չկան:

Պատումն ինքնին բավական ուշագրավ է, քանի որ աչքի է ընկնում իր բովանդակային ամբողջականությամբ և էպոսին բնորոշ մանրամասների առկայությամբ, նմանապես ունի երգային հատվածներ: Ադրբեջանի առկայությունը պատումում սկսվում է Դավիթով և վերջանում Փոքր Մհերով, այն միանգամայն համապատասխանում է նկարագրվող աշխարհագրական միջավայրին: Այս տարբերակը Մոկացի Հովանի պատումի նման որևէ խաթարում կամ շփոթ չի ենթադրում, մասնավորապես, հստակ տարանջատված են Գյուրջիստան-Վրաստանն ու բուն Ադրբեջանը: Բնական է, որ 1915 թ. գրառված լինելով՝ բանահավաքի և բանասացի կողմից որպես Ադրբեջան հասկացվում էր պատմական Ատրպատականը կամ իրանական Ադրբեջանը: Պատումի նշված հատվածը զգալիորեն նույնական է Մոկացի Հովանից գրառված պատումի համապատասխան մասի հետ:

Ինչպես այլ պատումներում, Դավիթը մտահոգվում է Խանդութի նախկին ուզնկանների՝ 40 փահլանների համար, որոշում նրանց տանել Գյուրջիստան և պսակել տեղի գեղեցկուհիների հետ: Մեկնելիս հղի կնոջը տալիս է բազպան (բազբանդ) ապագա որդու համար (ինչպես իրանական Ռոստամը կամ թյուրքական Քյոռոզին): Փահլանների հետ մոտենալով Թիֆլիսին՝ ճանապարհին հանդիպում է միևնույն ալևորը, բնորոշ հարցուպատասխանից հետո ծերունին խորհուրդ է տալիս. «Չէ՛, զավակս, Գուրջիստան լավ, գեղեցիկ աղջիկներ չկան: Լավ, գեղեցիկ աղջիկներ Ադրբեջանա քաղաք կան»⁹⁰: Առավել ուշագրավ է բանասացի բացատրությունն Ադրբեջանի և ալևորի ինքնության մասին, ինչը բացակայում է Մոկացի Հովանի տարբերակով. «Ադրբեջանա քաղաք կռապաշտ էր, էդ հալիվոր հրեշտակ էր. կ'ուզեր դարձնել Ադրբեջանա քաղաք աստվածապաշտ»⁹¹: Յուրյց տրված ճանապարհով Դավիթն իր ուղեկիցների հետ մուտք է գործում Ադրբեջանա քաղաք, հանդիպում թագավորի աղջկան, պայման կապում նրա 40 քույրերի հետ փահլանների ամուսնության համար, ինչպես Մոկացի

⁸⁸ Հակառակ մյուս պատումների համապատասխան նշումների («գրի առնողն անհայտ»)՝ բանահավաքի հարցը լռության է մատնված, ինչը հիմք է տալիս ենթադրել, որ խոսքը բացթողման մասին է կամ ԽՍՀՄ իշխանությունների համար որևէ «անցանկալի անձի» չհիշատակման:

⁸⁹ Սասնա ծռեր. 1951, 563:

⁹⁰ Սասնա ծռեր. 1951, 611:

⁹¹ Սասնա ծռեր. 1951, 611: Համահավաք տարբերակում Աստծո հրեշտակը ճամփաբաժնին ավագ հերոս Սանասարին է հայտնվում Քաջանց երկիր մեկնելիս՝ կրկին ծեր ալևորի տեսքով (Սասունցի Դավիթ. 1939, 76–77):

Հովանի տարբերակով: Ընդամին, կրկնվում են միևնույն մանրամասները. արքայադուստրը ներկայանում է տղամարդու զգեստով ծպտված, ինքնությունը բացահայտվում է հետագայում, տեղական կուռքերը կրկին հետապնդում են դրսեկ օտարներին («Հողեղեն էր, տարավ զհրեղեն») ⁹²: Դավիթը կրկին կոփվ է տալիս հարձակման դիմած ուժերի դեմ, հաղթում, ամայացնում քաղաքը, կրկին գտնում թագավորի աղջկան, վերցնում իր հետ. «Էդ փոքր աղջիկ լավ, գեղեցիկ աղջիկ է, տանեմ Սասուն» ⁹³: Վերադարձի ճանապարհին հետևում են միևնույն զարգացումները՝ հանդիպում և մենամարտ չճանաչված որդու հետ, Խանդութի խնդրանքն Աստծուն՝ բաժանելու հարազատներին, բազայանով միմյանց ճանաչելը, Դավթի անեծքը: Նմանապես անփոփոխ է Փոքր Միերի հետ կապված զարգացումը. «Աղջիկը պսակեց Միերի վրա, տարավ, դրեց Ադրբեջանա քաղաքի թագավոր, դարձուց աստվածապաշտ էն երկրի իշխողներ» ⁹⁴: Հաջորդում են միևնույն դեպքերը. Դավթի մահը Չմշկիկի փոփոխակ վրեժխնդիր կնոջից (Բանա խանում), Ձենով Օհանի ազդարարությունը, ինչը հասնում է մինչև Ադրբեջանա քաղաք՝ Միերին: Վրիժառությանը և Սասունում Դավթի թաղմամբ բավական հակիրճ ավարտվում է այս պատումը ⁹⁵, փաստորեն, չընդգրկելով վերջին մասը, այն է՝ Փոքր Միերի դեգերումները, կնոջ մահը, նրա թաղումը Սասունում և հերոսի փակվելը ժայռում: Չնայած դրան՝ պատումը բավական լիարժեք տպավորություն է թողնում՝ միևնույն հատորում ընդգրկված այլ պատումների համեմատությամբ:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Հ. Դավթյանի պատումն անխաթար և ամբողջությամբ պարփակում է Մոկացի Հովանի տարբերակում մեկ այլ պատումի հետ միաձուլված նախաձևը: Ընդամին, առանձնանում են հետևյալ ընդհանուր պահերը.

- Ատրպատականը կամ Ադրբեջանը հեռավոր երկիր է, այն սահմանակից չէ Սասունին,
- Ադրբեջանը կռապաշտ երկիր է, քրիստոնյաների համար՝ թշնամական միջավայր,
- Սասնա հերոսները որոշակի նախախնամությամբ են մուտք գործում երկիր, նրանց է ուղղորդում ալևորի տեսքով հրեշտակը,
- հակառակ կռապաշտությանը՝ երկիրը հռչակված է գեղեցկուհիներով, որոնց կնության են առնում հերոսները, տանում որպես նաժիշտ կնոջ կամ կին՝ որդու համար,
- քրիստոնյա հերոսներին հետապնդում են կուռքերը, որոնք պարտության են մատնվում,
- Փոքր Միերը կնության է առնում տեղի թագավորի դստերը, որի կռապաշտ լինելն ընդգծվում է աստղապաշտությամբ (աստղագուշակությամբ),

⁹² Սասնա ծռեր. 1951, 612:

⁹³ Սասնա ծռեր. 1951, 612:

⁹⁴ Սասնա ծռեր. 1951, 616:

⁹⁵ Սասնա ծռեր. 1951, 616:

– Միերը թագավորում է Ադրբեջանում, երկիրը իշխաններով հանդերձ դարձի բերում քրիստոնեության⁹⁶:

Վերոհիշյալ հիմնականաբար, ըստ էության, կարող է ունենալ առավել հին ծագում և հանդիսանալ այն նախաձևը, որը հիմք է կազմել Ատրպատականի հիշատակությամբ մի տեղական Մշո պատումի⁹⁷: Ամեն դեպքում Մոկացի Հովանի կողմից այն համակցվել է մեկ այլ պատումի՝ երկու տարբեր ենթաշերտերի միաձուլմամբ:

Միաժամանակ հստակ է, որ եթե անգամ այս պատումն էպոսի համահավաք տարբերակի կազմության ժամանակ հայտնի էր, սակայն ուշ է հրատարակվել, կրկին հիմք չէր կարող ծառայել Ադրբեջանի հիշատակության ընդգրկման համար՝ ընդամենը լինելով մի առանձնակի տարբերակ և ոչ բնորոշ էպոսի ընդհանուր բովանդակությանը:

Այլ համանման դրսևորումներ. Գորգիզ և Համդոլ

Հայտնի է Խանդութի դռնապան Գորգիի կամ քավոր Գորգիզի կերպարի կապակցումը Վրաստանին, ինչը, թերևս, արժանի էր մանրակրկիտ վերլուծության, սակայն կրկին մի հարվածով «որոշվել» է խնդիրը: Առաջին անգամ նման միտք Գրիգոր Խալաթյանցի հետ ունեցած նամակագրության ընթացքում հայտնել է Գարեգին Սրվանձտյանցը: Մասնավորապես, 1881 թ. փետրվարի 12-ի նամակով Խալաթյանցն ուղարկել է բանահավաքի առաջին հրատարակության առնչությամբ հարցացուցակ, որի մի կետը վերաբերում է հենց տվյալ կերպարին. «Չունի՞ն արդեօք առանձին նշանակություն այս անունները. «Շըբըկան-Խորասական», «Հըմզա-Լոռայ», «Գորգիզ» կամ «Ջորջիզ»⁹⁸: Ելնելով դեռ 1874 թ. հրատարակության առաջաբանում նշված սեփական ենթադրություններից⁹⁹:

⁹⁶ Պատումներում ընդգծվում է Սասնա հերոսների խաչապաշտ և ջերմեռանդ քրիստոնյա լինելը, ինչը, հակառակ ժամանակի գաղափարախոսական ճնշման, հրատարակություններում պահպանվել է: Մոկացի Հովանի պատումում Խանդութի 40 ուզնկանների հետ սեղան նստելը Դավիթն օրհնում է Տերունական աղոթքով (բարբառային տարբերակ), իսկ Խանդութին չի պատրաստվում զիջել կռապաշտներին, քանի որ նա էլ է խաչապաշտ (Սասնա ծռեր. 1936, 210–211):

⁹⁷ Հակառակ բազմահազար նահատակների՝ IV–V դդ. Ատրպատականում և, ընդհանրապես, Իրանում քրիստոնեական եկեղեցի թեև գործել է, սակայն չի արմատավորվել: Ատրպատականն իր հերթին անվամբ և տարածքով բավական հայտնի է եղել գրադաշտական սրբավայրերի առկայությամբ:

⁹⁸ Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ). Գ. Սրվանձտյանցի ֆ., ք. II, № 341, հմմտ. Վ ա ղ ա ն յ ա ն. 1971, 125:

⁹⁹ «Խանտուտ խանում, և Շըբըզան խոռասական, Հըմզայ լոռայ փեհլիվանները . . . որ այս խօսքերուն մէջ կ'երեւնան, գուցէ վիպասանից ծանօթ լինին, և աւելի Վրաստանի բնակչաց» (Ս Ր Ո Ա Ն Ծ Տ Ե Ա Ն Գ. 1874, 170): Նշված կերպարների որևէ առնչություն Վրաստանի հետ չի դիտարկվում. Շապուհ Խորասականն իր զանազան փոփոխակներով (ընդհուպ Շապկով Խորոված) համարվում է պարսից Շա-

Սրվանձտյանցն ի պատասխան կարծիք է հայտնում, թե «Խանդուտ խանըմ և վէպի միւս հանգամանքներ Վրաստանի հետ վերաբերութիւն ունին»¹⁰⁰: Ընդամին, սա մի ժամանակահատված էր, երբ էպոսը բավարար չափով ուսումնասիրված և վերլուծված չէր, անվանի բանահավաքը, իր իսկ խոսքերով, ուղղակի հիմք է ընդունել էպոսում հիշատակվող հայկական որոշ շրջանների (Կաղզվան, Լոռի) սահմանակից լինելը Վրաստանին: Դրանից էլ բխում է Սրվանձտյանցի պատասխանի հաջորդ մասը՝ «Գորգիզ կամ Զորջիզ» սովորական անուն է Վրաց ազգի մէջ» (sic)¹⁰¹, անշուշտ, նկատի առնելով վրացական «Գիորգին» կամ «Գեորգին», որը, սակայն, նշված տարբերակով իրականում հայտնի չի եղել և բնորոշ չէ վրաց իրականությանը:

1881 թ. հրատարակված էպոսի ռուսերեն թարգմանության մեջ Սրվանձտյանցի հայտնած կարծիքի հիման վրա Խալաթյանցը տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Գորգիզը վրացական անուն է, որը ևս մեկ անգամ ցույց է տալիս պոեմի նորացումը (подновление)»¹⁰²:

1889 թ. «Մուրճ» հանդեսում տպագրված հոդվածում Մ. Աբեղյանը, ակնհայտորեն հետևելով վերոհիշյալին, «Գորգիզը» բնորոշել է որպես «վիրական անուն», ավելին՝ կարծիք հայտնել, թե էպոսում «նոյն իսկ յիշատակում է և վրացոց տիրապետութիւնը Հայաստանի վերայ» (sic)¹⁰³:

1906 թ. և 1910 թ. նման միտք իրեն բնորոշ արագ նույնացումների ոճով արձարծել է Ս. Կանայանը¹⁰⁴, ինչի առումով արժանացել է Մ. Աբեղյանի արդարացի քննադատությանը («Հենց այսքան, անուններ միայն») ¹⁰⁵: Սակայն ավելի ուշ Աբեղյանն արդեն ինքն է նշել այդ կապակցությունը¹⁰⁶:

Ըստ ամենայնի, Ս. Կանայանի ազդեցությամբ 1920 թ. մի հոդվածում միևնույնը կրկնել է Հ. Թումանյանը՝ հանիրավի գեղարվեստականացնելով և ընդհանրացնելով ոչնչով չամրապնդված ենթադրությունը. «Եվ էսպես էլ հայկական էպոսի մեջ մշտապես անսասան կանգնած են հայոց հսկայի, Սասունցի Դավթի և վրացի հսկայի, Գիորգիի (այլ վար. Համդոյ) հսկայի դեմքերը իրար կողքի, ուր Դավիթը Գիորգիին է տալիս իր բարևը, Գիորգին էլ միայն Դավթի բարևն է

պուռի արքայի վերհուշը, Լոռա Համզան (Քաչալ Համզա) այլ ծագում ունի և ընդհանուր կերպար է հայ և թյուրք վիպական բանահյուսության մեջ (Ռ ամ ա զյ ա ն. 2023, 150–171):

¹⁰⁰ ԳԱԹ, Գ. Խալաթյանցի ֆ., ք. V, № 732, 4, հմմտ. Վ ա ռ դ ա ն յ ա ն. 1971, 127:

¹⁰¹ ԳԱԹ, Գ. Խալաթյանցի ֆ., ք. V, № 732, 4, հմմտ. Վ ա ռ դ ա ն յ ա ն. 1971, 127:

¹⁰² Давидъ Сасунскій. 1881, 80.

¹⁰³ Ա բ ե դ ե ա ն. 1889, 1742:

¹⁰⁴ «Վէպի «քաւոր Գորգի» ... վրաց թագաւոր Գորգի կամ Գէորգէն է» (Կ ա - ն ա յ ե ա ն ց. 1906, 337) կամ «Ջոջանց վէպի Գորգիզը վրացի Գէորգն է» (Կ ա - ն ա յ ե ա ն ց. 1910, ԻԷ):

¹⁰⁵ «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոս. 1939, LI, հմմտ. Ա բ ե դ յ ա ն. 1966, 546:

¹⁰⁶ Ա բ ե դ ե ա ն. 1918–1, 2, հմմտ. Զ ա ք ա ռ յ ա ն. 2013, 199:

առնում ... Սա հայ ժողովրդի հավիտենական կարծիքն է Վրաստանի մասին»¹⁰⁷: Հետագայում սույն թեզը շրջանառվել է տարբեր հեղինակների կողմից¹⁰⁸:

Քավոր Գորգիի կամ Գորգիզի կերպարը հանդիպում է Սասնա Դավթի ամուսնության դրվագում, որպես կանոն, Մշո պատումներում: Ընդամին, կերպարը նշվում է մի քանի համանման անվանաձևերով՝ Գորգի, Գորգին, Գորգեն, Գորգեզ, Գորգիկ, Գորկիկ, Գուրգեն¹⁰⁹, հիմնականում Խանդութի ծառան է (նոքար), 40 տարվա դռնապանը (պալատի դռնբաց) կամ այգեպանը (բաղվանչի): Միայն մեծից բանասացից Գ. Սրվանձտյանցի գրառած տարբերակի նախաբանում բանահավաքը նշել է «Ջորջիզ» անվանաձևը¹¹⁰, որը, սակայն, բուն տեքստում չի հանդիպում ու որևէ այլ դիպվածով հայտնի չէ: Ամենայն հավանականությամբ, հետագա խմբագրության ընթացքում ընդունվել է «Գորգիզ» առավել կանոնական ձևը, իսկ մյուսը տեքստից հանվել է:

Մոկաց պատումներում, որպես Խանդութի դռնապան, հանդես է գալիս Համդուլը (Համտուլ), որին Ս. Կանայանը ևս փորձել է որոշ անվանական նույնացմամբ անհաջող կապակցել Վրաստանին: Մասնավորապես, նկատել է առնվել XIII դ. վրաց Ռուսուդան թագուհու դեսպան Համդուլը կամ պատմիչ Կիրակոս Գանձակեցու երկում մի առիթով հիշատակված Համադուլա (Համադուլայ) իշխանը¹¹¹, ինչը Կանայանը կրկնել է տարբեր գրություններում¹¹²: Ըստ Հ. Աճառյանի՝

¹⁰⁷ Թ ու մ ա ն յ ա ն. 1995, 573: Հայ-վրացական բարեկամությանը նվիրված «Պայծառ էջեր» հոդվածը 1920 թ. ռուսերեն հրատարակվել է «Братство» հանդեսում՝ որոշ տեքստային տարբերությամբ (Թ ու մ ա ն յ ա ն. 1995, 659–661): Հետագայում բանաստեղծի դուստր Ն. Թումանյանը, իր մի հոդվածում մեկնաբանելով սույն գրությունը, փորձել է հանիրավի երկատել Համդուլի կերպարը, իբր, վրացի Համդուլի և դռնապանի. «Այս Համդուլին չպետք է շփոթել էպոսի դռնապան Համդուլի հետ» (Թ ու մ ա ն յ ա ն. 1939, 3):

¹⁰⁸ 1939 թ. էպոսի 1000-ամյակին նվիրված միջոցառման օրերին միևնույն թեզը մեջքերվել է Ն. Թումանյանի հոդվածում (Թ ու մ ա ն յ ա ն. 1939, 3): 1942 թ. Չիթունին ևս կարծիք է հայտնել, թե «Գորգիզ անունն ու Համտուլի դերը՝ մեր Վեպին կ'միացնէ՝ դրացի, հաւատակից եւ յաճախ զինակից Վրացի ազգը» (Չ ի թ ու ն ի. 1942, 938):

¹⁰⁹ Գ. Սրվանձտյանցի գրառած պատումի 1910 թ. հրատարակության մեջ հավասարապես առկա են «Գորքիզ» և «Գորգիզ» (Սասունցի Դավիթ կամ Միեթի դուռ. 1910, 24): Ավելի ուշ նորբայազետցի բանասացից գրառված պատումում միաժամանակ առկա են «Գուրգեն» և «Գորգի» (Սասնա ծռեր. 1979, 538):

¹¹⁰ Ս Ր ու ա ն ձ տ ե ա ն ց. 1874, 130, հմմտ. Սասնա ծռեր. 1944, 4: Բանահավաքն ընդգծում է դռնապանի զինաթափումը Դավթի կողմից. «Ու ձեռքէն առեց զթօփուզ ու թալեց. ու դըռ հըլայ կ'երթայ ...» (Ս Ր ու ա ն ձ տ ե ա ն ց 1874, 169): Մ. Աբեղյանը, մեջբերելով Գ. Սրվանձտյանցի մեկնաբանությունը, 1939 թ. էպոսի մատենագիտության ներածության մեջ նշել է «Ջորջիս» անվանաձևը՝ որպես համարժեք «Գորգիզի» («Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոս. 1939, XVIII, հմմտ. Ա բ ե դ յ ա ն. 1966, 519): Թուրքերենում փոխառված առկա են համանման Cercis և Circis:

¹¹¹ Գ ա ն ձ ա կ ե ց ի. 1961, 292:

¹¹² Կ ա ն ա յ ե ա ն ց. 1906, 337, Կ ա ն ա յ ե ա ն ց. 1910, Իէ:

«Համիդոլա» (Համիդոլայ) անունը ծագում է արաբերեն 'amūd-ud-dowla «սին պետության» պարսկական տիտղոսից, որը վրացերեն հայտնի էր «Համադավա» ձևով¹¹³: Սակայն առավել հավանական է թվում զուտ արաբական ծագումը՝ الْحَمْدُ al-Hamdu li-llāh-ից, կարճ՝ «փառք Աստծուն» իմաստով¹¹⁴: Ամեն դեպքում ակնհայտ է, որ իսլամական ծագմամբ անունը վրացականության խորհրդանիշ չէ:

Ընդհանրապես, Ս. Կանայանն իր տարբեր գրություններում բազմիցս աղերսներ է փորձել գտնել հայոց և վրաց բանահյուսության մեջ, նշել թեմային առանձնակի անդրադառնալու մտադրության մասին¹¹⁵: Մ. Աբեղյանը քննադատել է նաև այս փորձը. «Դարձյալ հենց այսքան, անուններ միայն»¹¹⁶:

Այլ տարբերակով՝ Դևատան քաղաքի տիրուհի Խանդութի դռնապանն է Սևաեղունգ դևը, որին նեղում է Դավիթը¹¹⁷: Որոշ պատումներում Համդոլը ևս դիվականացված է՝ Համտոլ դև, իսկ գավառի բանասացից գրառված պատումում Համդոլ դևը Քառսուն Ծամ Գոհարի դռան պահապանն է, որին նեղում է ավագ հերոսներից Սանասարը¹¹⁸: Չիթունու «Սասունական» մշակման մեջ բոլորն էլ նույնացված են և հանդես են գալիս որպես մեկ կերպար՝ Կապուտ-Բերդի դռնապան (միաժամանակ՝ Խանդութի պարտիզան և ծառա) Համտոլ-Գորգիզ, որին նաև «Սեաեղունգ-Դէւ կ'ըսեն»¹¹⁹:

Բացի այդ, պատումներում առկա են, ընդհանրապես, նշված տարբերակներից անվանապես զանազանվող կերպարներ: Օրինակ՝ սասունցի հայտնի բանասաց Թամո Դավթյանի պատումում առկա է Խանդութի պահապան Խարախոլ Բողեն¹²⁰, իսկ նորբայազետցի բանասացներից գրառված զույգ պատումներում Խանդութի դռնապանը (դարգվանջի) Դավթի անվանակիցն է¹²¹: 1972 թ. մեկ այլ նորբայազետցի բանասացից գրառված պատումում Կապուտկողի տիրուհի Խանդութի պահապանն այգեպան է՝ քավոր Ղևանդը, որը բավական աջակցում է Դավթին և եզակի որոշ դերակատարություն ունենում անգամ նրա մահից հետո¹²²: Այլ տարբերակներով՝ դռնապանն անանուն է, ուղղակի նշվում է որպես

¹¹³ Ա ճ ա ո յ ա ն. 1946, 28:

¹¹⁴ Թահմիդ, աղոթական-ծիսական բացականչություն (Bewley. 1998, 28), համազոր՝ քրիստոնեական «Ալելուիա»-ին:

¹¹⁵ Կ ա ն ա յ ե ա ն գ. 1910, ԻԶ-ԻԷ:

¹¹⁶ «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոս. 1939, LII, Ա բ ե դ յ ա ն. 1966, 546: Ըստ երևույթին, Ա. Իսահակյանը ևս նկատի է առել տվյալ կապակցումը «Սասնա Մհեր» վիպերգի սևագիր տարբերակում, երբ վրաց արքայադուստր Գոհարին այցելելիս Փոքր Մհերին դիմավորում է Համդոլի որդի Համդոլը (Ա բ ե դ յ ա ն. 1975, 140), ինչը վիպական նախաձևից հեռացած գեղարվեստական հորինվածք է:

¹¹⁷ Սասնա ծռեր. 1936, 1011–1012:

¹¹⁸ Սասնա ծռեր. 1936, 988:

¹¹⁹ Չ ի թ ու ն ի. 1942, 935, 937:

¹²⁰ Սասնա ծռեր. 1944, 189–190: Թրք. karakol «պահակակետ, պահակախումբ», որից էլ karayn փոխառությունն է ռուսերենում:

¹²¹ Սասնա ծռեր. 1951, 54, 200:

¹²² Սասնա ծռեր. 1979, 497:

«դըռնապատ»¹²³ կամ «դարգըվանչի»¹²⁴: Մանավանդ, ավելի ուշ ժամանակահատվածում գրառված պատումներում դռնապանի կերպարն իսկ ջնջվել է. մի պատումով նշվում է ուղղակի Խանդութի ծառան (խարավաշ)¹²⁵:

Մեկ այլ տարբերակով՝ Գորգոն Խանդութի եղբայրն է, փաստացի դռնապանի դերում է Դավթի ժամանման դրվագում¹²⁶: Առկա է նաև Մշո Գորգիկ իշխանի կերպարը, որը ևս նշվում է որպես Դավթի քավոր և ազգական (այլ տարբերակներով՝ Բիթլիսի իշխան, Ջոջ Միերի քեռի¹²⁷ կամ քավոր¹²⁸): Թերևս, նույն շարքում կարելի է դիտարկել Ծովինարի եղբայր Գորգիկ (Գորգիգ) խաչապաշտ թագավորի կերպարը, որն ընդդիմանում է կռապաշտ Սինամբարին¹²⁹, ինչն ակնհայտորեն Սասնա պատումներին բնորոշ շեղում-շփոթ է: Զուտ ծառայական հանգամանքով՝ Գորգի-Գորգիգի շարքին կարող է կապակցվել միևնույն պատումում առկա Ծովինարի ծառա Թոփալ Գոգեի կերպարը, որն իր տիրույթում փախցնում է կռապաշտի համար¹³⁰:

Փաստորեն, Գորգի-Գորգիգի դեպքում խոսքն էպոսի հերոսներին և հերոսուհիներին մերձավոր երկրորդական կերպարի մասին է, որը հիմնականում հանդես է գալիս կեցավայրի պահապանի, կնքահոր կամ այլ ազգականի դերակատարությամբ: Սովորաբար նշվում է նրա ահից բարևելը Դավթին, վերջինիս կողմից զինաթափվելը (խլում է գուրզը և շարտում), քավորության խոստումը, Դավթին մրցակիցների դավադրությունից զգուշացնելը և, փաստորեն, Սասնա հերոսին անխուսափելի մահից փրկելը: Բոլոր տարբերակներով էլ կերպարները լուսանցքային բնույթի են, ընդ որում, ոչ միշտ դրական (մշեցի բանասացի բնութագրմամբ՝ «էդպե՛ս սարսափելի մարդ չի կար»)՝¹³¹. Նշված դրվագներից հետո նրանց դերակատարությունը սովորաբար վերջանում է և այլևս չեն հիշատակվում (բացառությամբ մարտադաշտում Խանդութի հետ Դավթի դիակի որոնման դրվագի, որն առկա է որոշ պատումներում): Պատումների մի մասում, ընդհանրապես, բացակայում է դռնապանի կերպարը, իսկ քավորի դերակատարությունը նույնիսկ չի դրսևորվում Դավթի և Խանդութի հարսանիքի դրվագում: Ամեն դեպքում այս առումով բուն պատումներում ո՛չ Վրաստանի, ո՛չ էլ վրացիների ընդհանրացված ընկալում բացարձակ չի նշմարվում:

¹²³ Սասնա ծռեր. 1951, 604:

¹²⁴ Սասնա ծռեր. 1979, 330: Ավելի ուշ գրառված մի պատումով՝ դռնապանի հետ կապված դրվագն առնչվում է էպոսի ավագ հերոս Սանասարի և Դեղձուն-ճուղ-ճամի հետ (Սասունցի Դավիթ. 1977, 74–75), ինչն ակնհայտորեն շեղում-շփոթ է:

¹²⁵ Սասնա ծռեր. 1999, 170: Քավոր Գորգիի կամ Գորգիկի անունն իսպառ բացակայում է 1970-ական թվականներին թալինցի բանասացներից գրառված էպոսի պատումներում. մտաբերվել է միայն մի դեպքում՝ այն էլ բանահավաքի հուշումով (Սասնա ծռեր. 1999, 364):

¹²⁶ Սասնա ծռեր. 1951, 696:

¹²⁷ Սասնա ծռեր. 1944, 262:

¹²⁸ Սասնա ծռեր. 1999, 338–339:

¹²⁹ Սասնա ծռեր. 1944, 135:

¹³⁰ Սասնա ծռեր. 1944, 135:

¹³¹ Սասնա ծռեր. 1951, 604:

Հ. Աճառյանը հայոց մեջ վկայված «Գորգ» («Գարգ») անձնանունը բխեցնում է «Գէորգ»-ից, նման անվամբ նշում VII-XVII դդ. գործած 37 պատմական անձնավորության, իսկ համանման «Գորգի», «Գորգիկ», «Գորգուկ», «Գորգիմելիք» անվանաձևերով՝ ևս 6 պատմական անձնավորության¹³²: Ավելի մեծ թիվ են կազմում համանման անվանաձևերով ձեռագիր աղբյուրներում հիշատակված անձինք: Անվան ծագումը հուն. Գեօրգիոս-ից է, որն իր հերթին բխում է հին հուն. γεωργός «երկրագործ, հողագործ» իմաստից: Հունական միջավայրում անունը հայտնի է եղել դեռևս հեթանոսական շրջանում¹³³, սակայն առավել տարածվել է ի հիշատակ 303 թ. քրիստոնյա մեծագույն նահատակներից կապադովկացի իշխան Սբ. Գևորգ զորավարի: Աճառյանը տվյալ անձնանունից է բխեցնում նաև «Գիորգիս» անվանաձևը¹³⁴, իսկ բանահավաք Բենսեի (Ս. Մովսիսյան) ուսումնասիրության համաձայն՝ հենց Մուշ-Բուլանլիսի տարածքում «Գորգիզը» հայտնի է եղել որպես «Գևորգի» կրճատ ձևերից¹³⁵: Ընդամին, տվյալ ձևը մինչ այժմ հայտնի է հունական միջավայրում և առավել բնորոշ է հենց հույներին¹³⁶, բացի կանոնավոր ձևերից՝ Գեօրգիոս և նոր հուն. Γεωργος, գործածական են նաև Գեօրգի, Γεωργος և Գարգի¹³⁷: Թուրքական միջավայրում հույները մինչ այժմ էլ հայտնի են Yorgoler (Գեօրգիոս-ի հոգնակին թուրքերեն) մականուն-էթնոնիմով (էթնոֆոլիզմ):

Հաշվի առնելով Վասպուրականին հունական աշխարհի առավել մոտ լինելը թե՛ տարածական, թե՛ մշակութային առումով, թերևս, Գորգիի կամ քավոր Գորգիի կերպարը կարելի էր բնորոշել որպես հայ-հունական երբեմնի սերտ հարաբերությունների վերհուշ: Չի բացառվում, որ էպոսի նախնական տարբերակներում նկատի է առնվել նաև քրիստոնյա զինվորների պահապան, քաջամարտիկ և քաջամարտիկների հովանավոր Սբ. Գևորգ զորավարը, որի վկայաբանությունը բավական տարածված էր հայոց շրջանում: Վասպուրականի բանահյուսությունը պարփակել է բազմաթիվ հնագույն առասպելաբանական մոտիվներ ու տարրեր, որոնցից, օրինակ, հիշատակելի է հին հունական առասպելներից Եվրիպիդեսի և այլ հեղինակների մշակմամբ հայտնի Ալկեստիսի ու Ադմետոսի պատմությունը, ինչը տեղական միջավայրում դրսևորվել է Ասլանի և Մարգարիտի սիրո մասին վիպերգով («Ասլան-աղա» կամ «Կագուան Ասլան»): Միևնույն շարքից է նաև Ափրոդիտեի տաճարի քրմուհի Հերոյի և Լեանդրոսի սիրո մասին հին հունական առասպելի հիմնականաբար դրսևորումն Ախթամարի (Աղթամար) հայոց ավանդազրույցում:

Անշուշտ, հարցը կարոտ էր առավել խորը քննության, սակայն պետք է հաշվի առնել, որ 1930-ական թվականներին «նորածն» էր ամեն ինչի կապակցումը ԽՍՀՄ առաջնորդ Իոսիֆ Ստալինին՝ առնվազն նրա էթնիկ պատկանելության

¹³² Աճառյան. 1942, 489–493:

¹³³ Հին հունական առասպելների համաձայն՝ Ջևսի մականուններից, որը համարվում էր նաև հողագործության հովանավորը:

¹³⁴ Աճառյան. 1942, 455:

¹³⁵ Հայ ազգագրություն և բանահյուսություն. 1972, 68:

¹³⁶ Հունական ազդեցությամբ «Գորգիզ» կամ «Գորգիս» բնորոշ է նաև ասորիներին:

¹³⁷ A Lexicon Greek Personal Names. 1987, 107.

միջոցով: Ըստ այդմ՝ Ուրարտուն հայտարարվում էր վրացական պետություն, վրացիներ էին էտրուակները, նախավրացի (պրոտոքարթվել) էին հռչակվում տարածաշրջանի հնագույն ժողովուրդները (այդ թվում՝ Միջագետքի շումերները): 1937 թ. ԽՍՀՄ պատմության դասագրքում երկրի տարածքում գոյություն ունեցած Ուրարտու հնագույն պետության մասին աներկբա նշվում էր. «Դա այժմյան Վրաստանի նախահայրերի պետությունն էր» («Это было государство родоначальников нынешней Грузии»)¹³⁸: Անգամ ավելի ուշ ժամանակահատվածում՝ որոշ մեղմացումից հետո, իներցիայի ուժով, հայերից բացի, Ուրարտուի մշակույթի ժառանգներ էին համարվում նաև վրացիները («Армянский и грузинский народы - наследники культуры Урарту»)¹³⁹: Նման մթնոլորտի և պայմանների առկայությամբ արդեն որոշակիորեն օրինաչափ էր «վրացական քավորության» արհեստական և անհարկի ուռճացված թեզի շրջանառությունը: Հաշվի առնելով հայ-վրացական դարավոր բարեկամության դրվագները՝ իրապես դրա կարիքը չկար, սակայն բանախոսությունը ևս զոհաբերվել է «ժողովուրդների բարեկամության» գաղափարախոսական դրույթին¹⁴⁰:

1939 թ. սեպտեմբերին Երևանում էպոսի 1000-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին Վրացական ԽՍՀ կառավարության ներկայացուցիչ Գ. Կիկնաձեն աներկբա նշում էր Սասունցի Դավթի և «վրաց դյուցազուն Գյորգու» համագործակցության մասին, և Դավթին «ուղարկում» քավոր դարձած դռնապանի երկիր (sic)¹⁴¹: Մեկ այլ վկայության համաձայն (Գրիգոր Սահառունի)¹⁴²՝ վրաց գիտական շրջանակների ներկայացուցիչն «իր երկար ու ծանձրալի ելույթին մեջ մի քանի անգամ յիշեց, թե Սասունցի Դավթը վրաց թագաւոր Դավթն է, որին երախտապարտ հայ ժողովուրդը սիրով յիշում է իր ազգային դիցազնավէպի մէջ»¹⁴³:

¹³⁸ Краткий курс истории СССР. 1937, 8.

¹³⁹ Нечкина, Лейбенгуб. 1971, 17.

¹⁴⁰ 1937–1939 թթ. «Սասնա Մհեր» վիպերգի սևագիր տարբերակներում Ա. Իսահակյանը Փոքր Մհերի ընտրյալ Գոհարին կամ Գոհարիկին ներկայացրել է որպես «Գյուրջի թագավորի աղջիկ»: Ըստ ամենայնի, հետագայում անդրադառնալով նման իգական անվան բացակայությանը վրաց շրջանում՝ բանաստեղծն այն փոխարինել է «Թամար» անվամբ, գործողությունները տեղափոխել Մցխեթ (Աբեղյան. 1975, 138–141):

¹⁴¹ Ընկ. Գ. Ի. Կիկնաձեի ճառը. 1939, 4:

¹⁴² Գրիգոր Սահառունին կամ Սահարունին (Սաղաթելյան) ծն. 1913/1914 թթ., Մեղրու Կալեր գյուղում. Կ. Մելիք-Օհանջանյանի զարմիկը: Բանասեր, բանաստեղծ, 1941 թ. մեկնել է ռազմաճակատ, գերեվարվել, հարել Բեռլինի Ազգային խորհրդին, 1942–1943 թթ. աշխատակցել Հայկական լեզվոնի «Հայաստան» շաբաթաթերթին: Պատերազմից հետո բնակվել է Շտուտգարտում, 1951–1954 թթ. աշխատակցել տեղի «Հայաստան» շաբաթաթերթին, փոխադրվել ԱՄՆ: Վախճանվել է 1993 թ., թաղվել Առլինգտոնի գերեզմանատանը: Մի քանի գրքերի և էպոսի գեղարվեստական չափածո մշակման («Արմենական») հեղինակ է:

¹⁴³ Սահարունի. 1952, 40–41: Հուշագիրը սխալմամբ նշում է գրականագետ Մալաքիա Տորոշելիձեին, որը, սակայն, 1937 թ. բռնադատվել և գնդակահարվել էր: Իրականում 1939 թ. սեպտեմբերի 16-ի միջոցառմանը հանդես է եկել գրող և դրամա-

Ավելին, միևնույն վկայության համաձայն, էպոսի առնվազն 3 պատում «լոյս տեսան խիստ կրճատումներով. ժողովրդական պատումներից դուրս մնացին այն հատուածները, որոնք ուղղուած էին Վրաստանի դէմ ...»¹⁴⁴: Խնդրի առնչությամբ հակոտնյա մոտեցումներ են ունեցել Մ. Աբեղյանը և Հ. Օրբելին. վերջինիս ուղղորդմամբ համապատասխան հատվածները կրճատվել են¹⁴⁵:

Անշուշտ, ամեն երևույթ և իրողություն պետք է դիտարկել իր ժամանակի և տարածության մեջ: 1952 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում տպագրված սույն եզակի հուշերի հեղինակն իսկ խոստովանում էր. «Հեշտ է Օրբելուն մեղադրել անգղի սեւ դերի մէջ, բայց պատկերացնում էք, թէ ի՞նչ կը լինէր Աբեղեանի եւ Օրբելու վիճակը, եթէ հատորը նոյնութեամբ տպուէր ... Անշուշտ, մենք գնահատում ենք մեր մեծանուն գիտնական Մ. Աբեղեանի ազգային բարձր զգացումները: Բայց, մենք գնահատում եւ հասկանում ենք նոյնպէս մեծանուն հայ գիտնական ակադեմիկոս Հ. Օրբելու զգուշաւոր եւ շրջահայեաց դիրքը Խորհրդային դժնէ պայմաններում ...»¹⁴⁶:

Վրաստան և վնասը

Բնականաբար, ճիշտ չէ ամբողջությամբ բացառել Վրաստանի մասին որևէ հիշատակություն: Սակայն ակնհայտ է, որ էպոսի պատումներում գերիշխում է «Գյուրջիստանը», որպես գեղեցկուհիների երկիր¹⁴⁷, ինչը բնորոշ է նաև արևելյան էպոսներին: Օրինակ՝ նույնիսկ ավելի ուշ ձևավորված «Քյոռոզլի» էպոսի որոշ թուրքական և ադրբեջանական պատումներում գլխավոր հերոսն իր ծոերին (դալիներին) պսակելու համար ևս գնում է Գյուրջիստան, ինչպես «Սասնա ծռերի» պատումներում՝ Դավիթը և Փոքր Մհերը: Մանավանդ, մուսուլմանական Արևելքի համար Վրաստանը գեղեցիկ աղջիկների և տղաների մատակարարման աղբյուրի համբավն ուներ բավական երկար ժամանակ: Պատումներում Դավիթն էլ գեղեցկուհի վրացուհուն որպես նաժիշտ է ցանկանում տանել հղիացած Խանդութի համար, ինչպես, օրինակ, դեռևս 1899 թ. Արտաշես Աբեղյանի գրառած մի մոկաց տարբերակով¹⁴⁸:

Դեռևս 1873 թ. Մշո Առնիստ գյուղի երեսփոխան Տարոնցի Կրպոյից Գարեգին Սրվանձտյանցի գրառած պատումում դոնապան Գորգիզը Դավթին ուղղված իր նախազգուշացմամբ հպանցիկ նշում է «վրաստուն» անձանոթ բառը («հողի

տուրգ Շալվա Դադիանին, որի ելույթի տեքստն ամբողջությամբ ժամանակի հայ մամուլը չի տպագրել, ըստ երևույթին, հենց վերը նշված պատճառով, այլ բավարարվել է մի հատվածի տպագրությամբ (Ընկեր Շալվա Դադիանիի ճառից. 1939, 2):

¹⁴⁴ Ս ա հ ա ր ու ն ի. 1952, 40:

¹⁴⁵ Ս ա հ ա ր ու ն ի. 1952, 40–41: Թեմայով այլ տեղեկություններ հայտնի չեն, ըստ այդմ՝ սույն հաղորդումն ամեն դեպքում ենթակա է հետազա ճշգրտման:

¹⁴⁶ Ս ա հ ա ր ու ն ի. 1952, 40:

¹⁴⁷ Ինչպես Հ. Օրբելին է նշել էպոսի հրատարակության առաջաբանում, «գեղեցկուհիների երկիրը – Գյուրջիստան» (Սասունցի Դավիթ. 1939, XVIII):

¹⁴⁸ Ա բ ե դ ե ա ն. 1901, 105, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 293:

վնաստուն է, վրաստուն չէ»¹⁴⁹, որը հետագայում գնահատվել է որպես «Վրաստանի անվան ժողովրդական ձև»¹⁵⁰: «Վրաստուն» բառի հատուկենտ հիշատակություններ հանդիպում են որոշ ձեռագրերում¹⁵¹, առավել տարածված է եղել համահունչ «Վրաց տունը»: Սակայն սա ամեն դեպքում համոզիչ չէ, մանավանդ, արևմտահայ բանասացի պարագային: Որպես «առակածն խոսք» գնահատված հատվածի բացատրությամբ՝ «դա այնպիսի տեղ է, ուր մարդ կը վնասվի և Վրաստան չէ, ուր մարդ անվնաս կը մնա»¹⁵²: 1880 թ. Թիֆլիսում հրատարակված Սեդրակ Մանդինյանի մշակման մեջ նշված հատվածը կրկնվում է՝ արդեն երկրանվան ընդգծմամբ («այս տեղս վնաստուն է, Վրաստան չէ») ¹⁵³, ինչով ողջ բառախաղն արդեն խաթարված է: 1881 թ. ռուսերեն հրատարակության մեջ բառերը տրված են առանց թարգմանության. «Давидъ, куманекъ, тутъ – внастунъ, а не врасунъ!»¹⁵⁴: Առկա է Գ. Խալաթյանցի հետևյալ ծանոթագրությունը. «Այստեղ բառախաղ է, դրա թարգմանությունն այսպիսին է. «Այստեղ վտանգավոր տեղ է, և ոչ Իբերիան», «այսինքն՝ մի՛ կարծիր, թե գտնվում ես Իբերիայում, ո՛չ, դու վտանգավոր երկրում ես»¹⁵⁵: 1898 թ. ժողովածուի մեջ Խալաթյանցը ռուսերեն կրկնել է վերոհիշյալ հատվածը, սակայն արդեն գլխատառով (Врасунъ), իսկ բառի միևնույն ծանուցումը տրված է առավել հաստատուն ոճով¹⁵⁶: 1944 թ. էպոսի Բ հատորի հրատարակության մեջ բառը ևս նշված է գլխատառով և արհեստականորեն դարձել է երկրանուն¹⁵⁷, ինչը կրկնվել է նաև հետագա հրատարակություններում¹⁵⁸:

1889 թ. «Մուրճ» հանդեսում տվյալ հատվածը Մ. Աբեղյանը բացատրել է, «թե այստեղ Վրաստուն չէ, ուր կարելի է կեանքի ապահովություն ունենալ, այլ վնաստուն է, ամենայն թույլ կարելի է վնասի, վտանգի սպասել»¹⁵⁹: 1918 թ. մի աղիթով նշված հատվածն Աբեղյանը մեկնաբանել է որպես առածավոր խոսք. «Սասունցի Դափթը շրջապատուած է այլազգի թշնամի փափկաններով, որոնք նրան հարբեցնել և դաադրութամբ սպանել են ուզում: Դափթն այդ չգիտէ. նրա քաւոր Գորգիզն այդ հասկացնել է ուզում նրան ասելով առածաւոր խօսքը թէ՛ «Զգոյշ կաց, այստեղ վնաստուն է, Վրաստուն չէ»: Վրաստանն ուրեմն հայի համար վնաստուն չէ եղել: Նա կարող էր այնտեղ հանգիստ լինել իր կեանքի համար»¹⁶⁰:

¹⁴⁹ Ս Ր Ո Ւ Ա Ն Ծ Տ Ե Ա Ն Գ. 1874, 170, հմմտ. Սասունցի Դափթ կամ Մհերի դուռ. 1910, 25:

¹⁵⁰ Սասնա ծռեր. 1951, 873:

¹⁵¹ Օրինակ՝ 1476 թ. Ավետարանի (Colophons of Armenian Manuscripts. 1969, 321) և 1531 թ. հայսմավուրքի հիշատակարաններում (Դիւան հայոց պատմութեան. 1912, 30):

¹⁵² Սասնա ծռեր. 1951, 873:

¹⁵³ Ազգային դիւցազնական աշխարհ. 1880, 27:

¹⁵⁴ Давидъ Сасунскій. 1881, 71.

¹⁵⁵ Давидъ Сасунскій. 1881, 80.

¹⁵⁶ Халатьянцъ. 1898, 75.

¹⁵⁷ Սասնա ծռեր. 1944, 34:

¹⁵⁸ Ավելի ուշ կրկնվել է Գ. Սրվանձտյանցի Երկերի Ա հատորում (Ս Ր Վ Ա Ն Ծ Տ - յ ա Ն Գ. 1978, 104):

¹⁵⁹ Ա բ ե դ ե ա ն. 1889, 1743:

¹⁶⁰ Ա բ ե դ ե ա ն. 1918-1, 2, հմմտ. Զ ա ք ա ը յ ա ն. 2013, 199:

Կապված Վրաստանում հայ գաղթականների առումով գերիշխած խիստ բացասական վերաբերմունքի հետ՝ Թիֆլիսի «Ժողովրդի ծայն» թերթում տպված նույն հոդվածում Աբեղյանը նշում է. «Նա {հայը} այլ ևս չի կարող ասել՝ «Այստեղ վնաստուն է, Վրաստուն չէ», որովհետև Վրաստանը նրա համար դարձել է մահուան տուն ... նա իր զաւակին մատով ցոյց տալով կասի՝ «Ո՛րդի, այնտեղ Վրաստուն է, վնաստուն»¹⁶¹: Վերոհիշյալի դեմ հանդես է եկել ՀՅԴ Թիֆլիսի «Աշխատատեղ» պաշտոնաթերթը, ընդամին, խեղաթյուրել հոդվածի բովանդակությունը՝ մեղադրելով հոդվածագիրին («քրքրելով նույն իսկ հայկական ժողովրդական միությունը և Միերի բերանով {sic} «Վրաստանը» «վնաստուն» յայտարարել»)՝¹⁶², ինչին հակադարձել է Աբեղյանը¹⁶³: Ակնհայտ է, որ տվյալ արտահայտությունն Աբեղյանին առավել քան ծանոթ էր՝ ժամանակին մամուլ էջերում տարակարծությունների տեղիք տալով:

Հակառակ սրան՝ 1939 թ. համահավաք տարբերակում նշված հատվածը տեղ չի գտել, Գորգիզի զգուշացումն այլ բնույթի է և բավական վերափոխված¹⁶⁴: Այսինքն՝ Աբեղյանը, ըստ էության, հետագայում բավարար չափով վստահ չի եղել բացատրության համար:

Ապարանցի բանասացից Գ. Հովսեփյանի գրառած և 1892 թ. հրատարակված պատումում առկա է վերոհիշյալին համարժեք հատված. «Էդի հարսնքի տուն չէ, մահտուն է»¹⁶⁵: Ըստ ամենայնի, հետևելով այս և նախորդ հատվածներին՝ Չիթունու մշակման մեջ ևս առկա է համապատասխան հատված. «Այդտեղ վնաստուն ու մահտուն է ... հարսնետուն կամ վրաստուն չէ՛»¹⁶⁶: «Վրաստուն» բառի բացատրությունը՝ «վրան կոթնելիք, վստահելիք տուն»¹⁶⁷, ինչը համոզիչ է թվում: Նորբայագետի բանասացից գրառված պատումում քավոր Գորգիի նախազգուշացման հատվածն այլևս ամբողջական չէ. «Սանհէ՛ր Դավիթ, վնաստուն ա ...»¹⁶⁸:

Մեկ այլ ապարանցի (ծագումով ալաշկերտցի) բանասացից 1912 թ. Ե. Լալայանի գրառած պատումում քավոր Գորգիի (Գորգեզ) զգուշացումը հետևյալն է. «Սանհէ՛ր Դավիթ, պատրաստ մացի ... էսի քնած տուն չէ, վնաս տուն է»¹⁶⁹: Նույնիսկ նոր ժամանակներում գրառված պատումներում Գորգիի նախազգուշացման հատվածն ավանդաբար առկա է, մասնավորապես, 1972 թ. ապարանցի

¹⁶¹ Աբեղյան. 1918–2, 1–2, հմմտ. Զաքարյան. 2013, 200–201:

¹⁶² Աբեղյան. 1918–3, 1: Ակնհայտ է, որ Աբեղյանի միտքն այն աստիճան է աղավաղվել, որ նույնիսկ Գորգիզի խոսքերը վերագրվել են Փոքր Միերին:

¹⁶³ Զաքարյան. 2013, 215–216:

¹⁶⁴ Սասունցի Դավիթ. 1939, 307:

¹⁶⁵ Սասմայ ծոեր. 1892, 44, Սասնա ծոեր. 1944, 83, Սասնա ծոեր. 1951, 873: Համանման զգուշացում անում է Գոհարը՝ ուղղված Փոքր Միերին՝ «ըստեղ Սասնա արևը չի, Հալեպի արևն ա, քրզի կը զարկա» (Սասնա ծոեր. 1951, 212):

¹⁶⁶ Չիթունի. 1942, 947, Չիթունի. 1960, 64:

¹⁶⁷ Չիթունի. 1960, 64: Ավելի վաղ, հետևելով նախորդ փորձերին, հավանական է համարվել նաև բառախաղով Վրաստանի ակնարկությունը (Չիթունի. 1942, 947):

¹⁶⁸ Սասնա ծոեր. 1951, 154:

¹⁶⁹ Լալայան. 1915, 126, հմմտ. Սասնա ծոեր. 1951, 529:

բանասացից գրառված պատումում. «Սաներ Դավիթ ... քնաստուն չէ, վնաստուն է»¹⁷⁰: 1973 թ. մարտունեցի բանասացից ևս հայտնի է դարձել համանման հատված, որը կրկնում է 1892 թ. Գ. Հովսեփյանի գրառած տարբերակը. «Էսի խարսընտուն չէ, մըխաց տուն է»¹⁷¹: Մեկ այլ մարտունեցի բանասացից 1973 թ. գրառված պատումում առավել մանրամասն է բացատրվում «վնաստան» էությունը. քավոր Գորգին կրկին զգուշացնում է Դավթին. «Էդտեղ վնաստուն ա, քե ըզգուշ պախա՛»¹⁷²: Հետևում է կիսահարբած Դավթի հարցումը. «Ի՞նչ վնաստուն»¹⁷³: Գորգին ճարահատ մանրամասնում է իր զգուշացումը. «Քե կըսեմ՝ ըզգուշ մանցի, քե կըվնասեն էդտեղ»¹⁷⁴: Նորբայազետցի բանասացից 1972 թ. Գրառված մեկ այլ պատումում Կապուտկողի տիրուհի Խանդութի այգեպան քավոր Ղևանդը թշնամիների հետ գինարբուքի մեջ ընկած Դավթին դիմում է հետևյալ կերպ. «Սա գինեստուն չէ՛, վնաստուն ա՛»¹⁷⁵:

Վերը նշված օրինակները (որոշները տիպիկ Մշո տարբերակ՝ ըստ Ս. Հարությունյանի)¹⁷⁶ վկայում են, որպես կանոն, Խանդութի՝ դոնապան-պահապանի հետ կապված դրվագի և նրա նախազգուշական բնույթի խոսքի որոշակի ավանդականության մասին, ինչը որևէ օտար միջավայրի կամ երկրանվան չի առնչվում: Այլ դեպքերում բառախաղի փոխարեն դոնապանն ինքն է Դավթից առաջ մտնում հյուրատուն և ստանում հարվածներ ուզկաններից:

Հայտնի է, որ «վնաստունը» Մշո բարբառով «վտանգավոր՝ վնասվելու տեղ» նշանակությունն ունի¹⁷⁷: Ըստ այդմ՝ վրաստուն-վնաստունը և համանման մյուս տարբերակներն ուղղակի համահնչյուն հակադրությամբ կազմված և որոշակիորեն հանգավորված բառախաղեր են՝ մեծամասամբ բաղադրիչներից մեկի համանման հնչողությամբ արհեստականորեն կազմված բառերի գործածմամբ, որոնցից է հենց «վրաստունը»: Որևէ վրացական հետք, ընդհանրապես, տվյալ պարագային չի դրսևորվում:

Ակնհայտ է, որ հատվածի կարծեցյալ առնչությունը Վրաստանին ևս որոշ փաստարկի դեր է ունեցել հաջորդաբար Գորգիզի կապակցման հարցում, ինչը, սակայն, հնարավոր չի թվում, քանի որ եթե տարոնցի (մշեցի) բանասացը տեսականորեն համադրել է Գորգի(զ)-գյուրջի-Գյուրջիստանը, ապա վրացի-Վրաստան-Վրաստունը բացառվում է: Պատումներում նշվում են նաև Գյուրջու քաղաք, Գուրջի-Բուրջի ամբար և այլ տեղանուններ¹⁷⁸: Սակայն սա կրկին բուն վիպական-աշխարհագրական միջավայրից հեռացած բանասացների կամ երբեմն նաև խմբագիրների արհեստական նորամուծությունն է: Էպոսի նախաձևերում Վրաստանը, բնականաբար, պետք է որ բացառվեր:

¹⁷⁰ Սասնա ծռեր. 1979, 278:

¹⁷¹ Սասնա ծռեր. 1979, 396:

¹⁷² Սասնա ծռեր. 1979, 433:

¹⁷³ Սասնա ծռեր. 1979, 433:

¹⁷⁴ Սասնա ծռեր. 1979, 434:

¹⁷⁵ Սասնա ծռեր. 1979, 497:

¹⁷⁶ Սասնա ծռեր. 1979, 458:

¹⁷⁷ Հայոց լեզվի բարբառային բառարան. 2010, 83:

¹⁷⁸ Սասնա ծռեր. 1999, 102:

«Վնաստուն-վրաստուն» բառախաղը, անշուշտ, ընդարձակ ստուգաբանության կարիք չէր ունենա, եթե ժամանակին նաև դրա հիման վրա արհեստականորեն չվրացականացվեին Գորգիզը և Համդոլը:

Հադրբեջան աչքեր

Որոշ հավելյալ բացատրություն է պահանջում Մոկացի Հովանի պատումի հետևյալ տողը՝ որպես խորհուրդ Դավթին և նրա 40 ուղեկիցներին ասված ճանապարհին հանդիպած ալևորի կողմից. «Աղէկ աղջիկ որ կ'ուզէք, կեացէք Հադրբեջան»¹⁷⁹: Կամ, ինչպես մշեցի Հարություն Դավթյանի պատումում է. «Լավ, գեղեցիկ աղջիկներ Ադրբեջանա քաղաք կան»¹⁸⁰: Սա իր հերթին հակասության մեջ է մտնում մնացյալ պատումների հետ, որոնցում հիմնականում գովերգվում է Վրաստանի, Չինաստանի և Հնդկաստանի աղջիկների գեղեցկությունը:

Ակնհայտ է, որ այս դեպքում բանասացը հստակ տարբերակում է Հադրբեջանն ու Գյուրջիստանը, այն է՝ Ատրպատականն ու Վրաստանը: Ինչ վերաբերում է Հադրբեջանի աղջիկներին, ապա վերը նշվածը ժամանակին հարևան Իրանում իրանցի բանաստեղծների շրջանում լայն տարածում ունեցած «ատրպատականյան աչքերով» գեղեցկուհիների գովասանության արտահայտությունն է, ինչը բնորոշ էր XIX դ. վերջին: Նման միտումն իր հերթին որոշակիորեն դրսևորվել է նաև ժամանակի հայ աշուղների շրջանում: Օրինակ՝ 1891 թ. հայագետ Քաջբերունին (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան) իր ուղեգրական նոթերում հրատարակել է Վայոց ձորի գյուղերում «Իմրանի» աշուղական կեղծանվամբ հայտնի քեչտազցի աշուղ Ղազարից գրառած «կոշմա» երգերից մեկը՝ հետևյալ քառատողով.

*Աշըղ Իմրանին եմ, խօսքերս արիր եմ խամար,
Աչքերդ թուփս ի, ընքերդ կամար,
Ես քեզի կու սիրամ իմ ջանիս համար,
Չի քղնվում Հադիրբեջան աչքերդ»¹⁸¹:*

Խաղի առնչությամբ աշուղն ինքը Քաջբերունուն հայտնել է, թե այն գրել է Վայքի Քարազլուփս գյուղում իր տեսած «մի գեղեցիկ աչքերով» կնոջ մասին¹⁸², այսինքն՝ խոսքն ամեն դեպքում կանացի աչքերի գեղեցկության մասին է, այլ ոչ թե որևէ ազգային պատկանելության:

Փաստորեն, վերը նշվածը հայ իրականություն ներթափանցած իրողությունների արտահայտությունն է, ինչը դրսևորվել է նաև հայ աշուղների ու բանասացների շրջանում:

¹⁷⁹ Սասմայ ծոեր. 1892, 130, հմմտ. Սասնա ծոեր. 1936, 219:

¹⁸⁰ Սասնա ծոեր. 1951, 611:

¹⁸¹ Ք ա ջ բ եր ու ն ի. 1891, 133:

¹⁸² Ք ա ջ բ եր ու ն ի. 1891, 133:

Էպոսի երկրանունները հնարավոր վերականգնման փորձ

Էպոսի որոշ պատումների վրա հիմնվելով՝ համեմատական մեթոդով այսօր էլ կարելի է վերականգնել վերը նշված գործողությունների թատերաբեմ հանդիսացող իրական (նախնական) երկրանունը:

Առաջին հերթին, այն կարող է լինել բազմաթիվ պատումներում վկայված Հնդստան-Հնդկաստանը: Որոշ պատումներում Դավթի ընտրյալ Խանդուբը Հնդու Յամանար թագավորի դուստրն է¹⁸³, տարբեր պատումներում հիշատակվում են նաև Հընդա երկրի ամիրան և Հընդա Մելիքը: Խանդուբի համար նա-ժիշտ (ծառա) բերելու նպատակով Դավթի Հնդստան է հասնում նաև ավելի ուշ գրառված պատումներում¹⁸⁴:

Ավելի վաղ գրառված պատումներում ավագ հերոսներից Սանասարը կնության է առնում Չինմաչինա թագավորի դստերը (Քառսուն-Ճուդ-ծամ կամ անանուն), մարտնչում գեղեցկուհուց կախարդված փահլևանների դեմ Չինմաչինու (Չընմաչընի) քաղաքում¹⁸⁵: Որոշ պատումներում Չինմաչինա թագավորը նշվում է Դավթի դեմ արշավանքի պատրաստվող Բապը Ֆրենկի դաշնակիցների թվում¹⁸⁶ կամ հենց Չինաստանա թագավորն է արշավում Խանդուբին տիրանալու նպատակով¹⁸⁷:

Պատումներից մեկում Դավթին անգամ ջրաղացքարերը բերում է «Հնտույամանից»¹⁸⁸, իմա՝ Հնդկաստանից, որը Չինմաչինի հետ տարաշխարհիկ իրերի (ինչպես նաև երևույթների) համար ամենաավանդական պատկերացումն էին կազմում՝ ըստ Ս. Հարությունյանի բնորոշման¹⁸⁹: Մանավանդ, հեքիաթներում դրանք վայրեր են, ուր ամեն ինչ արտասովոր է և աննման, մի խոսքով՝ չնաշխարհիկ (որոշ մեկնությամբ, «Չին աշխարհից»¹⁹⁰), այդ թվում՝ գեղեցկուհի կանայք: Իսկ Դավթի հետ կապվում էին ոչ պատմական և անիրական վայրեր ևս, որոնք պատմականի հետ կարող են նույնանալ «վիպական այն մյուս իրականության մեջ, որը դուրս է որոշակի իրականությունից»¹⁹¹:

Էպոսի այլ պատումներում Դավթի որդու համար հարս է բերում Գյուրջիստանի թագավորի դստերը, որին, սակայն, սեփական որդու համար ցանկանում էր տանել Չընմաչինա կամ Չընա թագավորը, և այդ հողի վրա էլ բախում է տեղի ունենում¹⁹²: Հետաքրքիր վարքականոն է ցուցաբերում Չինաստանի թագավորը, որը տեղի է տալիս Դավթի պայմանին՝ ընտանիքը (Միեր և հարսնացու) հասցնել տուն, վերադառնալ և կռվի բռնվել, սակայն ինչպես Չմշկիկ Սուլթանի դեպքում,

¹⁸³ Զոջանց տուն կամ Սասմայ ծռեր. 1910, 122, հմմտ. Սասնա ծռեր. 1936, 865–866:

¹⁸⁴ Սասունցի Դավթի. 1977, 310–311:

¹⁸⁵ Սասնա ծռեր. 1936, 320–322, 485–489, 539–543, 849–852:

¹⁸⁶ Սասնա ծռեր. 1936, 462:

¹⁸⁷ Սասնա ծռեր. 1936, 643:

¹⁸⁸ Սասնա ծռեր. 1999, 225:

¹⁸⁹ Սասնա ծռեր. 1999, 78:

¹⁹⁰ Ա ճ ա ո յ ա ն. 1977, 630:

¹⁹¹ Սասնա ծռեր. 1999, 81:

¹⁹² Սասնա ծռեր. 1936, 370–372:

Դավիթը մոռանում է ուխտը և միայն յոթ տարի հետո է հիշում ու մեկնում պայմանավորված մարտադաշտ՝ այն էլ համապատասխան հիշեցմամբ նամակ ստանալով այդ ողջ ժամանակահատվածում մարտադաշտում սպասող Չընաթագավորից¹⁹³։ Սա, հիրավի, Սասնա տան հակառակորդներին ոչ բնորոշ և օտար ասպետականություն է, ինչը խիստ տարբեր է ավանդական հակառակորդ Մըսրա Մելիքի ու նրա գործակիցների նենգ և ուխտադրուժ կեցվածքից։

Ամեն դեպքում Հնդկաստանի և Չինաստանի խորհրդանշական ընկալումը համահունչ էր արևելյան ու եվրոպական ընդհանուր ընկալումներին։ Այդ տեսակետից հայ բանասացը մնում էր համընդհանուր ավանդույթի ուղեծրում, ինչը բնական էր և համապատասխան պատմական ժամանակահատվածին։

Հարկ է նշել, որ 1993 թ. Գ. Գրիգորյանի կազմած համահավաք տարբերակում մնացել է միայն Գյուրջիստանը¹⁹⁴, Հադրբեջանն ամբողջությամբ զեղչված է։

Եզրակացություն

Էպոսի պատումներում հիշատակվող Հադրբեջանը կամ դրան կապակցված մյուս տեղանունները վերաբերում են պատմական Ատրպատականին և, ընդհանրապես, Իրանին։ Ներկա Ադրբեջանի Հանրապետությանը դրանք որևէ կերպ չեն կարող առնչվել։

Հադրբեջանի հիշատակությունները պատումներում երբեք չեն կազմել այն անհրաժեշտ քանակը, որի դեպքում տվյալ երկրանունը կարող էր ընդգրկվել էպոսի համահավաք տարբերակում։ Պատումների խմբագրության ընթացքում որոշիչ դեր է խաղացել ԽՍՀՄ գաղափարախոսական դրույթներից բխած թելադրանքը։

Սակավադեպ հիշատակված Հադրբեջանի փոխարեն միևնույն գործողությունների առումով էպոսի առավել մեծ թվով պատումներում նշվում են այլ երկրանուններ՝ Վրաստանը, ինչպես նաև Չինաստանն ու Հնդկաստանը, որպես հեռավոր վիպական իրականության խորհրդանիշ։

Սամվել Ռամազյան – ք. գ. թ., ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանագիտության բաժնի գիտաշխատող։ Գիտական հետաքրքրությունները՝ վիպական բանահյուսություն, հայ-թյուրքական բանահյուսական առնչություններ, հայ-հունական առնչությունների պատմություն։ Հեղինակ է 1 գրքի և շուրջ 40 հոդվածի։ ORCID: 0009-0007-1782-4777.

samvel.ramazyan@ysu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղեան Մ. 1889, Ազգային վէպ. – «Մուրճ» (Թիֆլիս), նոյեմբեր, № 11, էջ 1738–1761 [Abeghian M. 1889, National Epic. – “Murch” (Tiflis), November, № 11, pp. 1738–1761 (in Armenian)]:

¹⁹³ Սասնա ծռեր. 1936, 357:

¹⁹⁴ Սասունցի Դավիթ. 1993, 327–328:

Աբեղեան Ա. 1901, Թլուստ Դավիթ. – «Ազգագրական Հանդես» (Թիֆլիս), գիրք VII–VIII, էջ 103–112 [Abeghian A. 1901, Tlvt David. – “Azgagrakan Handes” (Tiflis), Books VII–VIII, pp. 103–112 (in Armenian)]:

Աբեղեան Մ. 1908, Հայ ժողովրդական վեպը. – Թիֆլիս, Ելեքտրոպրատ տպարան օր. Ն. Աղանեսյանի, 212 էջ [Abeghian M. 1908, Armenian Folk Novel. Tiflis, Electromagnetic Printing House of Miss N. Aghanian, 212 p. (in Armenian)]:

Աբեղեան Մ. 1918-1, Հայեր եւ վրացիներ I. – «Ժողովրդի ծայն» (Թիֆլիս), 3 սեպտեմբերի, էջ 2 [Abeghian M. 1918-1, Armenians and Georgians I. – “Zhoghovrdi Dzayn” (Tiflis), September 3, p. 2 (in Armenian)]:

Աբեղեան Մ. 1918-2, Հայեր եւ վրացիներ II. – «Ժողովրդի ծայն», 5 սեպտեմբերի, էջ 1–2 [Abeghian M. 1918-2, Armenians and Georgians II. – “Zhoghovrdi Dzayn”, September 5, pp. 1–2 (in Armenian)]:

Աբեղեան Մ. 1918-3, «Աշխատատը» լրագրին. – «Ժողովրդի ծայն», 29 սեպտեմբերի, էջ 1–2 [Abeghian M. 1918-3, To the Newspaper “Ashkhatavor”. – “Zhoghovrdi Dzayn”, September 29, pp. 1–2 (in Armenian)]:

Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ [Abeghian M. 1966, Works, V. I. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 572 p. (in Armenian)]:

Աբեղյան Հ. 1975, Իսահակյանը և ժողովրդական էպոսը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 189 էջ [Abeghian H. 1975, Isahakyan and the Folk Epic. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of ASSR, 189 p. (in Armenian)]:

Աբեղյան Մ. 1985, Երկեր, հ. Ը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 670 էջ [Abeghian M. 1985, Works, V. 8. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of ASSR, 670 p. (in Armenian)]:

Ազգային դիցազնական աշխարհ. 1880, Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ, Երկրորդ տարուայ ուսմունք եւ ընթերցմունք, յօրինեց Ս. Մանդինյան, Թիֆլիս, Հ. Էնֆիաճեանց եւ Ընկ. տպարան, 71 էջ [National Epic World. 1880, David of Sassoun or Mher's Door, Second Year Teaching and Reading, Compiled by S. Mandinian. Tiflis, H. Enfiants and Co. Printing House, 71 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1942, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 633 էջ [Acharyan H. 1942, Dictionary of Armenian Personal Names, V. I. Yerevan, YSU Publishing House, 633 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1946, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 740 էջ [Acharyan H. 1946, Dictionary of Armenian Personal Names, V. 3. Yerevan, YSU Publishing House, 740 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1948, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, ԵՊՀ հրատ., 683 էջ [Acharyan H. 1948, Dictionary of Armenian Personal Names, V. 4. Yerevan, YSU Publishing House, 683 p. (in Armenian)]:

Աճառյան Հ. 1977, Հայերեն արմատական բառարան. հ. Գ, Երևան, ԵՊՀ հրատ., 635 էջ [Acharyan H. 1977, Armenian Etymological Dictionary, V. 3. Yerevan, YSU Publishing House, 635 p. (in Armenian)]:

Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յաւելումովք նախնեաց. 2003, Մատենադարձ Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 2123–2192 [The Geography of Movses Khorenatsi with the Additions to the Ancestors. 2003, Armenian Classical Authors, V. 2, 5th century. Antelias-Lebanon, pp. 2123–2192 (in Armenian)]:

Գաբամաճեան Ս. 1910, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ռ. Սագաեան, Զ + 1406 էջ [Gabamajian S. 1910, New Dictionary of the Armenian Language, Constantinople, R. Sagayan Publishing House, VI + 1406 p. (in Armenian)]:

Դիան հայոց պատմութեան. 1912, գ. Ժ, Մատենագիրք ԺԵ–ԺԹ դար, Կենսագրական տեղեկութիւններով եւ ծանօթութիւններով հրատարակեց Գ. Աղանեանց ա. քահ., Թիֆլիս, Ելեքտրաշարժ տպարան օր. Ն. Աղանեանի, ԾԶ + 598 սնկ. [Collection of Armenian History. 1912, V. 1, Classical Authors 15th–19th Centuries, with Biographical Information and Introductions Published by Priest G. Aghaniants a. Tiflis, Electromagnetic Printing House of Miss N. Aghanian, XXVI + 598 figs. (in Armenian)]:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան. Խալաթյանցի ֆ., ք. V, № 732 [Museum of Literature and Art after Ye. Charents. Fund of Khalatians, S. V, № 732] (in Armenian):

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան. Գ. Սրվանձտյանցի ֆ., ք. II, № 341 [Museum of Literature and Art after Ye. Charents. Fund of G. Srvandzians, S. II, № 341] (in Armenian):

Ջարյան Ն. 1966, Սասնա Դավիթ. հայ ժողովրդական դյուցազնավեպ, Երևան, «Հայաստան» հրատ., 194 էջ [Zaryan N. 1966, Sasna David. Armenian Folk Epic. Yerevan, “Hayastan” Publishing House, 194 p. (in Armenian)]:

Ջաքարյան Ա. 2013, Մանուկ Աբեղյանը հայ-վրացական հարաբերությունների մասին. – ՊԲՀ, № 1, էջ 197–217 [Zakaryan A. 2013, Manuk Abeghyan on Armenian-Georgian Relations. – HPHJ, № 1, pp. 197–217 (in Armenian)].

Էմինեան Ազգագրական ժողովածու. 1901, հ. Բ, հաւաքեց Ս. Հայկունի, Մոսկուա–Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Ժ + 447 էջ [Eminian Ethnographic Collection. 1901, V. 2, Compiled by S. Haykuni, Moscow-Vagharshapat, Printing House of the Mother See of Holy Etchmiadzin, X + 447 p. (in Armenian)].

Ընկ. Գ. Ի. Կիկնաձեյի ճառը. 1939. – «Խորհրդային Հայաստան» (Երևան), 16 սեպտեմբերի [Comrade G. I. Kiknadze's Speech. 1939. – “Khorhrdayin Hayastan” (Yerevan), September 16 (in Armenian)]:

Ընկեր Շավվա Դադիանիի ճառից. 1939. – «Գրական թերթ» (Երևան), 30 սեպտեմբերի, [From the Speech of Comrade Shalva Dadiani. 1939. – “Grakan Tert” (Yerevan), September 30, (in Armenian)]:

Թումանյան Ն. 1939, Թումանյանը հայկական էպոսի մասին. – «Խորհրդային Հայաստան», 17 սեպտեմբերի [Tumanyan N. 1939, Tumanyan on the Armenian Epic. – “Khorhrdayin Hayastan”, September 17 (in Armenian)]:

Թումանյան Հ. 1995, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 718 էջ [Tumanyan H. 1995, Complete Collection of Works, V. 7. Yerevan, NAS RA “Gitutyun” Publishing House, 718 p. (in Armenian)]:

Լալայեան Ե. 1915, Մարգարիտներ Հայ բանահիւտութեան, գիրք Գ, Թիֆլիս–Էջմիածին, Ելեքտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 269 էջ [Lalayan E. 1915, Pearls of Armenian Folklore, Book C. Tiflis-Etchmiadzin, Electromagnetic Printing House of the Mother See of Holy Etchmiadzin, 269 p. (in Armenian)]:

Կանայեանց Ս. 1906, Մամիկոնեանց պատմութիւն. – «Արարատ» (Վաղարշապատ), ապրիլ, հ. Դ, էջ 328–342 [Kanayants S. 1906, History of the Mamikonians. – “Ararat” (Vagharshapat), April, V. 4, pp. 328–342 (in Armenian)]:

Կանայեանց Ս. 1910, Ջոջանց տուն կամ Սասնայ ծռեր վէպի երեք փոփոխակ, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, ԼԲ + 128 էջ [Kanayants S. 1910, Jojants Tun or Sasmay Tsrer Epic Three Variations. Vagharshapat, Printing House of the Mother See of Holy Etchmiadzin, XXXII + 128 p. (in Armenian)]:

Կիրակոս Գանձակեցի. 1961, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., ՃԻԷ + 426 էջ [Kirakos Gandzaketsi. 1961, History of the Armenians Edited by K. Melik-Ohanjanyan. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of ASSR, CXXVII + 426 p. (in Armenian)]:

Հայ ազգագրություն և բանահյուսություն. 1972, հ. III, Նյութեր և ուսումնասիրություններ, Բենսե (Սահակ Մովսիսյան), Հարք (Մշո Բուլանիկ), կազմող՝ Ս. Տարոնցի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 182 էջ [Armenian Ethnography and Folklore 1972, V. III, Materials and Studies, Bense (Sahak Movsisyan), Harq (Msho Bulanikh), Compiled by S. Tarontsi. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of ASSR, 182 p. (in Armenian)]:

Հայկական ինքնապաշտպանական կոհներ. 1915, պրակ Ա, Անդրանիկի կոհները 1914 նոյ. 3-ից – դեկտ. 2, Յոգուտ Հայ Կարմիր Խաչի, Սօֆիա, հրատ. «Հայաստան», 15 էջ [Armenian Self-Defense Battles 1915, V. I, Andranik's Battles 1914 Nov. 3 – Dec. 2, in Favor of the Armenian Red Cross. Sofia, Publishing House “Hayastan”, 15 p. (in Armenian)]:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2010, հ. 2, Գ. Գասպարյան, Ա. Գրիգորյան, Ա. Հակոբյան և ուրշ., Երևան, «Գիտություն» հրատ., 407 էջ [Dialectal Dictionary of the Armenian Language. 2010, V. 6, G. Gasparyan, A. Grigoryan, A. Hakobyan and others. Yerevan, “Gitutyun” Publishing House, 407 p. (in Armenian)]:

Հայոց պատմություն. 2018, գիրք I (IV դ. սկիզբ – IX դ. կես), հ. II, Երևան, «Զանգակ» հրատ., 704 էջ [Armenian History. 2018, Book I (beginning of the 4th century – middle of the 9th century), V. II, Yerevan, “Zangak” Publishing House, 704 p. (in Armenian)]:

Հաաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ. 1862, Վենետիկ, Սուրբ Ղազար տպարան, ԺԱ + 184 էջ [Vardan Vardapet's Compilation of History. 1862. Venice, St. Lazar Publishing House, XI + 184 p. (in Armenian)]:

Ղազար Փարպեցի. 2003, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 2201–2375 [Ghazar Parpetsi. 2003, History of Armenia, Armenian Classical Authors, V.2, 5th century. Antelias-Lebanon, pp. 2201–2375 (in Armenian)]:

Մալխասեանց Ս. 1945, Հայերէն բացատրական բառարան, հ. Դ, Երևան, ՀՍՍՌ Պետհրատ, 646 էջ [Malkhasiants S. 1945, Armenian Explanatory Dictionary, V. 4. Yerevan, State Publishing House of ASSR, 646 p. (in Armenian)]:

Մովսես Խորենացի. 2003, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 1743–2121 [Movses Khorenatsi. 2003, History of Armenia, Armenian Classical Autors, V. 2, 5th century. Antelias-Lebanon, pp. 1743–2121 (in Armenian)]:

Յովսէփեանց Գ. 1904, Ռոստամ Զալ. Ժողովրդական վէպ (Մոկաց բարբառով). – «Ազգագրական հանդէս» (Թիֆլիս), գ. XII, էջ 5–39 [Hovsepants G. 1904, Rostam Zal. Folk Epic (in Moks Dialect). – “Azgagrakan Handes” (Tiflis), Book XII, pp. 5–39 (in Armenian)]:

Յովսէփեանց Գ. 1905, Ռոստամ Զալ. Ժողովրդական վէպ (Մոկաց բարբառով), Թիֆլիս, Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի, 39 էջ [Hovsepian G. 1905, Rostam Zal. Folk Epic (in Moks Dialect). Tbilisi, Rapid Printing House of M. Martirosians, 39 p. (in Armenian)]:

Նժդեհ Գ. 2002, Երկեր, հ. 2, Երևան, ՀՀ արխիվային գործի գործակալություն, 504 էջ [Nzhdeh G. 2002, Works, V. 2. Yerevan, RA Archival Agency, 504 p. (in Armenian)]:

Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. 1837, հ. 2, Երկասիրություն երից վարդապետաց հ. Գ. Անտիքեան, հ. Խ. Սիրմելեան, հ. Մ. Ազերեան, Վենետիկ, ի տպարանի Սբ. Ղազարու, 1067 էջ [New Dictionary of the Armenian language. 1837, V. 2, Edited by Father G. Avetikian, Father Kh. Surmelian, Father M. Avgerian. Venice, Printing House of St. Lazarus, 1067 p. (in Armenian)]:

Չիթունի Տ. 1942, Սասունական: «Սասմանց տուն», «Սասմայ ծներ» կամ «Սասունցի Դավիթ» անուններով ծանօթ Հայ ժողովրդական դիցազնավեպին եօթը ճիւղին ամբողջական պատմություն, Փարիզ, Տպ. Արաքս Թօփալեան, 1168 էջ [Chitouni T. 1942, Sassounakan: the Complete History of the Seven Branches of the Armenian Folk Epic Known as “Sasmants Tun”, “Sasmay Tsrer” or “David of Sassoun”. Paris, Arax Topalian Press, 1168 p. (in Armenian)]:

Չիթունի Տ. 1960, Սասունական (Հայ ժողովրդական դիցազնավեպը), Պէյրուֆ, Տպ. Սեան, 111 էջ [Chitouni T. 1960, Sassounakan (Armenian Folk Epic). Beirut, Sevan Press, 111 p. (in Armenian)]:

Ջոջանց տուն կամ Սասմայ ծներ վեպի երեք փոփոխակ. 1910: Խմբագրեց և հրատարակեց Ս. Կանայեանց, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 128 էջ [Joants Tun or Sasmay Tsrer Epic, Three Versions. 1910, Edited and published by S. Kanayants. Vagharshapat, Printing House of the Mother See of Holy Etchmiadzin, 128 p. (in Armenian)]:

Ռամազյան Ս. 2023, Քաջալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում. – Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 5, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 150–171 [Ramazyan S. 2023, Kachal Hamza: a Common Character in Armenian and Turkic Epics. – Proceedings of the Institute of Archaeology and Ethnography 5. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of RA, pp. 150–171 (in Armenian)]:

Ռաշիդվաշ Վ. 2012, Ատրպատականի բնակչության մարդաբանական և գենետիկական բնութագիրը. – Ատենախոսություն «Մարդաբանություն» մասնագիտությամբ պ. գ. թ. գիտական աստիճանի համար, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, 117 էջ [Rashidvash V. 2012, Anthropological and Genetic Characteristics of the Atrpatakan Population, Dissertation in the Specialty “Anthropology” for the Degree of PhD, Institute of Humanities of NAS RA. Yerevan, 117 p. (in Armenian)]:

Ռուբէն. 1927, Հայաստան եւ Ատրպէճան. – «Հայրենիք» (Պոսթըն), թիւ 8, Յունիս, էջ 72–85 [Ruben, 1927, Armenia and Azerbaijan. – “Hayreniq” (Boston), № 8, June, pp. 72–85 (in Armenian)]:

Ռուբէն. 1984, Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ. – Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներ եւ երկիրներ, հ. 8, Պէյրուֆ, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, 367 էջ [Ruben, 1984, Armenia on the Intercontinental Routes. – Peoples and

Countries of the Middle East, V. 8. Beirut, Hamazkayin “Vahe Setian” Publishing House, 367 p. (in Armenian)]:

Սահարունի. 1952, Հայ-վրացական մշակութային տարակարծություններ. – «Հայրենիք», թիվ 11, նոյեմբեր, էջ 38–42 [Saharuni, 1952, Armenian-Georgian Cultural Disagreements, “Hayreniq”, № 11, November, pp. 38–42 (in Armenian)]:

Սասմայ ծռեր. 1892, Սասունցի Դավիթ ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ (Աբարանի և Մոկաց բարբառներով), գրի առաւ Գարեգին Սարկաւազ, Թիֆլիս, Տպարան Մ. Շարաձէի, 151 էջ [Sasmay Tsrer. 1892, Two New Variants of the Folk Epic of David Sassoun (in Abaran and Mokats dialects), Written by Karekin Deacon. Tiflis, M. Sharadze Printing House, 151 p. (in Armenian)]:

Սասնա ծռեր. 1936, Ժողովրդական վեպ, հ. Ա, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, «Պետհրատ», 1128 էջ [Daredervils of Sassoun. 1936, Folk Epic, V. 1, Edited by M. Abeghian, with Collaboration of K. Melik-Ohanjanyan. Yerevan, “Pethrat”, 1128 p. (in Armenian)]:

Սասնա ծռեր. 1944, Ժողովրդական վեպ, հ. Բ, մաս Ա, ընդհանուր խմբագրությամբ Մ. Աբեղյանի, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, «Պետհրատ», 425 էջ [Daredervils of Sassoun. 1944, Folk Epic, V. 2, Part 1, Edited by M. Abeghian, with Collaboration of K. Melik-Ohanjanyan. Yerevan, “Pethrat”, 425 p. (in Armenian)]:

Սասնա ծռեր. 1951, Ժողովրդական վեպ, հ. Բ, մաս Բ, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Հայպետհրատ, 1006 էջ [Daredervils of Sassoun. 1951, Folk Epic, V. 2, Part II, Edited by M. Abeghian, with Collaboration of K. Melik-Ohanjanyan. Yerevan, Haypethrat, 1006 p. (in Armenian)]:

Սասնա ծռեր. 1977, Ժողովրդական վեպ, աշխատությամբ Ս. Հարությունյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 698 էջ [Daredervils of Sassoun. 1977, Folk Epic by S. Harutyunyan. Yerevan, “Sovetakan Grogh” Publishing House, 698 p. (in Armenian)]:

Սասնա ծռեր. 1979, հ. Գ, պատումների գրառումները և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 584 էջ [Daredervils of Sassoun. 1979, V. 3, Notes of Stories and Preparation of the Original Text by S. Harutyunyan and A. Sahakyan. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 584 p. (in Armenian)]:

Սասնա ծռեր. 1999, հ. Դ, Նոր պատումների գրառումը և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 582 էջ [Daredervils of Sassoun. 1999, V. 4, Notes of New Stories and Preparation of the Original Text by S. Harutyunyan and A. Sahakyan. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 582 p. (in Armenian)]:

Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ. 1910, ծրագրեաց Գ. Վ. Սրուանձտեանց, Ղալաթիա-Կ. Պոլիս, տպագր. Օ. Բարսեղեան եւ որդի, 40 էջ [David of Sassoun or Door of Mher. 1910, Edited by G. V. Srvantsdians. Galatia-K. Constantinople, Printed by O. Barseghyan and Son, 40 p. (in Armenian)]:

Սասունցի Դավիթ. 1939, Հայկական ժողովրդական էպոս: Կազմ.՝ Մ. Աբեղյան, Գ. Արով, Ա. Ղանալանյան, խմբ.՝ Ի. Օրբելի, Երևան, «Պետհրատ», 385 էջ [David of Sassoun. 1939, Armenian Folk Epic. Compiled by M. Abeghian, G. Abov, A. Ghanalanyan, Edited by I. Orbeli. Yerevan, “Pethrat” Publishing House, 385 p. (in Armenian)]:

«Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոս. 1939, Բիբլիոգրաֆիա, պրակ 1-ին, կազմեցին Մ. Բաբայան և Ս. Միքայելյան, ներածությամբ և խմբագրությամբ Մ. Աբեղյանի, Երևան, «Պետհրատ», LXXIII + 117 էջ [“David of Sassoun” Armenian Folk Epic. 1939, Bibliography, V. 1, Compiled by M. Babayan and S. Mikayelyan, Introduction and Editing by M. Abeghian. Yerevan, “Pethrat” Publishing House, LXXIII + 117 p. (in Armenian)]:

Սասունցի Դավիթ. 1977, Նոր պատումներ: Հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Գ. և Վ. Գրիգորյանները, Երևան, «Սովետական գրող» հրատ., 367 էջ [David of Sassoun. 1977, New Stories. Collected and Prepared for Publication by G. and V. Grigoryan. Yerevan, “Sovetakan Grogh” Publishing House, 367 p. (in Armenian)]:

Սասունցի Դավիթ. 1981, Հայ ժողովրդական հերոսավեպ: Առաջաբանը, բառարանը, ծանոթագրությունները՝ Ս. Հարությունյանի, Երևան, «Լույս» հրատ., 359 էջ [David of Sassoun. 1981, Armenian Folk Heroic Epic. Preface, Dictionary, Notes by S. Harutyunyan. Yerevan, “Luys” Publishing House, 359 p. (in Armenian)]:

Սասունցի Դավիթ. 1993, համահավաք բնագիր, հյուսեց և խմբագրեց Գ. Գրիգորյանը, աշխատակցությամբ Ա. Շահսուվարյանի և Ա. Բուդաղյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 416 էջ [David of Sassoun. 1993, Original Collection, Compiled and Edited by G. Grigoryan, in Collaboration with A. Shahsuvaryan and A. Budaghyan. Yerevan, Publishing House of NAS RA, 416 p. (in Armenian)]:

Սրբանձտեանց Գ. 1874, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Միէրի դուռ, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, 192 էջ [Srvandzdyants G. 1874, Grots u Brots ev David of Sassoun or Door of Mher. Constantinopole, Publishing House E. M. Tntesian, 192 p. (in Armenian)]:

Սրվանձտյանց Գ. 1978, Երկեր, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 668 էջ [Srvandztyants G. 1978, Works, V. 1. Yerevan, Publishing House of NAS of ASSR, 668 p. (in Armenian)]:

Վարդանյան Վ. 1971, Գրիգոր Խալաթյանցի անտիպ նամակները Գարեգին Սրվանձտյանցին. – ՊԲՀ, № 1, էջ 111–130 [Vardanyan V. 1971, Grigor Khalatyants' Unpublished Letters to Garegin Srvandztyants. – HPHJ № 1, pp. 111–130 (in Armenian)]:

Վրացեան Ս. 1920, Պարսկական պահանջները. – «Յառաջ» (Երևան), 24. 02. 1920 [Vratsian S. 1920, Persian Claims. – “Haraj” (Yerevan), 24. 02. 1920 (in Armenian)]:

Փավստոս Բուզանդ. 1987, Պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 456 էջ [Pavstos Buzand, 1987, History of the Armenians, Original Text by K. Patkanian, Translation and Annotations by St. Malkhasyants. Yerevan, YSU Publishing House, 456 p. (in Armenian)]:

Քաջբերունի. 1891, Ճանապարհորդական նկատողութիւնք, ԽԹ. – «Արարատ» (Վաղարշապատ), թիւ Գ, էջ 129–147 [Kajberuni 1891, Travel Notes. – “Ararat” (Vagharshapat), № III, pp. 129–147 (in Armenian)]:

Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. 1976, հ. 9, Հին հունական աղբյուրներ, Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասսիոս: Թարգմանություն բնագրից, առաջ. և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 267 էջ [Foreign Sources about Armenia and Armenians. 1976, V. 9, Ancient Greek Sources, Josephus Flavius, Cassius Dio. Translation from the Original, Foreword and Annotations by S. Krkyasharyan. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 267 p. (in Armenian)]:

Бартольд В. В. 1963, Сочинения, т. II, ч. 1, Общие работы по истории Средней Азии. Работы по истории Кавказа и Восточной Европы. Москва, изд. восточной литературы, 1020 с. [Barthold V. V. 1963, Essays, V. 2, Part. 1, General Works on the History of Middle Asia. Works on the History of the Caucasus and Eastern Europe. Moscow, Publishing House of Eastern Literature, 1020 p. (in Russian)].

Бартольд В. В. 1971, Сочинения, т. VII, Работы по исторической географии и истории Ирана. Москва, изд. «Наука», 663 с. [Barthold V. V. 1971, Essays, V. 7, Works on Historical Geography and History of Iran. Moscow, "Nauka" Publishing House, 663 p. (in Russian)].

Давидъ Сасунскій. 1881, Армянскій народный эпосъ. – «Журналъ Министерства народнаго просвѣщенія», Ноябрь, СПб., Типографія В. С. Балашева, 82 с. [David of Sassoun. 1881, Armenian Folk Epic. – "Journal of the Ministry of Public Education", November. St. Petersburg, V. S. Balashev Publishing House, 82 p. (in Russian)].

Давид Сасунский. 1939, Армянский народный эпос. Ред. Орбели И. А. Москва–Ленинград, изд. АН СССР, 384 с. [David of Sassoun. 1939, Armenian Folk Epic. Ed. Orbeli I. A. Moscow–Leningrad, Publishing House of the Academy of Sciences of the USSR, 384 p. (in Russian)].

Краткий курс истории СССР 1937, Учебник для 3-го и 4-го классов, под ред. проф. А. В. Шестакова. Москва, Государственное учебно-педагогическое изд., 223 с. [A Brief Course of the History of the USSR, 1937, Textbook for the 3rd and 4th Classes, Edited by Professor A. V. Shestakov. Moscow, State Educational and Pedagogical Publishing House, 223 p. (in Russian)].

Нечкина М. В., Лейбенгруб П. С. 1971, История СССР. Учебник для 7 класса, Москва, «Просвещение», 252 с. [Nechkina M. V., Leibengrub P. S. 1971, History of the USSR. Textbook for the 7th Class, Moscow, "Prosveshchenie", 252 p. (in Russian)].

Обращение Совета народных комиссаров. 1937, «Ко всем трудящимся мусульманам России и Востока». 20 ноября (3 декабря) 1917 г. – Ленин, Сталин. Избранные произведения 1917 года. Москва, Партиздат, с. 638–640 [Address of the Council of People's Commissars. 1937, "To all Muslim Working People of Russia and the East." November 20 (December 3), 1917. – Lenin, Stalin. Selected Works of 1917. Moscow, Partizdat, pp. 638–640 (in Russian)].

Реза Э. 2020, Азербайджан и Арран: Атурпатакан и Кавказская Албания. Перевод с персидского, предисл. и доп. Г. С. Асатрян. Ереван, РАУ, 120 с. [Reza E. 2020, Azerbaijan and Arran: Aturpatakan and Caucasian Albania. Translated from Persian, Foreword and Additions by G. S. Asatryan. Yerevan, RAU, 120 p. (in Russian)].

Рейснер Л. М. 1958, Избранные произведения. Москва, Госиздат художественной литературы, 533 с. [Reisner L. M. 1958, Selected Works. Moscow, State Publishing House of Fiction, 533 p. (in Russian)].

Солженицын А. И. 2006, В круге первом (роман). Москва, изд. «Наука», 796 с. [Solzhenitsyn A. I. 2006, In the First Circle (Novel). Moscow, "Nauka" Publishing House, 796 p. (in Russian)].

Халатянцъ Г. А. 1898, Давидъ Сасунскій. Образчикъ армянскаго народнаго эпоса. – Братская помощь пострадавшимъ въ Турции армянамъ. Москва, Типо-литографія И. Н. Кушнерева и К°, с. 59–81 [Khalatians G. A. 1898, David of Sasoun.

An Example of the Armenian Folk Epic. – “Brotherly Aid to the Armenians Who Suffered in Turkey”. Moscow, Tipo-lithography I. N. Kushnerev and K^o, pp. 59–81 (in Russian)].

Ша'бани Р. 2002, Краткая история Ирана. СПб., «Петербургское востоковедение», 384 с. [Sha'bani R. 2002, A Brief History of Iran. St. Petersburg, "Petersburg Oriental Studies", 384 p. (in Russian)].

A Lexicon Greek Personal Names. 1987, V. I, The Aegean Islands, Cyprus, Cyrenaica. Edited by P. M. Fraser and E. Matthews. New York, Clarendon Press Oxford, XXXV + 489 p.

Bewley A. 1998, A Glossary of Islamic Terms. London, Ta-Ha Publishers Ltd., 283 p.

Colophons of Armenian Manuscripts. 1969, 1301–1480, A Source for Middle Eastern History, Selected, Translated and Annotated by A. Sanjian, Harvard University Press, Cambridge, Massachusetts, XV + 459 p.

Strabonis Geographica. 1852, Recognovit A. Meineke, V. 2, Lipsiae, Sumptibus et Typis B. G. Teubneri, 816 s. (in Greek).

Türkmen F. 1992, Türk Halk Edebiyatının Ermeni Kültürüne Tesiri. Bornova-Izmir, Akademi Kitabevi, 88 s. (in Turkish).

О НЕКОТОРЫХ ГЕОНИМАХ ЭПОСА «САСНА ЦРЕР»

САМВЕЛ РАМАЗЯН

Р е з ю м е

Ключевые слова: «Сасна црер», эпос, Хадрбеджан (Азербайджан), Атрпатакан, Гюрджистан (Грузия), Иран, М. Абебян, С. Канаян, сказитель, Горгиз (Горги).

В оригинальном своде эпоса «Сасна црер» («Сасунские удальцы») с 1936 г. упоминается геоним «Хадрбеджан» или «Азербайджан», который в период существования СССР ассоциировался с соседней Азербайджанской ССР.

Проведенные нами исследования позволяют заключить, что вышеизложенное основано лишь на двух версиях, записанных от сказителей из Мокса (Западная Армения), отправившихся за границу в конце XIX в. Сказители имели в виду исторический Атрпатакан (Атропатена), т. е. Иранский Азербайджан. Более того, в одной из версий геоним упоминается вместо Гюрджистана (Грузия). В то же время в других версиях эпоса в данных эпизодах фигурируют другие геонимы, главным образом Китай и Индия.

Ещё в 1908 г. М. Абебян в своих исследованиях поясняет название «Хадрбеджан», однако в силу идеологического диктата, обусловленного пропагандистскими положениями «вековой дружбы советских народов», в оригинальный свод эпоса были искусственно введены совершенно чужеродные элементы.

Самвел Рамазян – к. филол. н., доцент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, научный сотрудник отдела фольклористики Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: эпический фольклор,

Историко-филологический журнал • Историко-филологический журнал • 2026 № 2

Summary

Samvel Ramazyan – Ph.D. of Philological Sciences, Associate Professor at the Chair of Turkology of the Faculty of Oriental Studies of YSU, Researcher at the Department of Folklore Studies of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: epic folklore, Armenian-Turkic folklore relations, history of the Armenian-Hellenic relations. Author of 1 monograph and about 40 articles. ORCID: 0009-0007-1782-4777. samvel.ramazyan@ysu.am